



Ֆինանսական
Ֆուտբոլ

Մոդուլ 1 // ՓՈՂ ԽՆԱՅԵԼ. ՍԿՍԵՔ ՀԻՄԱ.
Միջազգային մակարդակ: 18 տարեկան և բարձր

Մոդուլ 1 // «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼ» ԵՐԱԳԻՐ

Ֆինանսական ֆուտբոլը կրթական տեսախաղ է, որը նախատեսված է անձնական ֆինանսների հիմունքների մասին ավելի գիտելիքներ կուտակելու համար:

Այն մշակվել է այն տրամաբանությամբ, որ խաղերը կարող են լինել ուսուցման արդյունավետ գործիքներ: Ֆինանսական ֆուտբոլը աշակերտներին, ուսանողներին ներգրավում է զվարճալի, հաճելի զբաղմունքում՝ միաժամանակ տալով նրանց գիտելիքներ այնպիսի թեմաներով, որոնք էական են կյանքի կարևոր հմտություններ յուրացնելու համար:

Ֆինանսական ֆուտբոլը բարդության տարբեր մակարդակների հարցեր է առաջադրում ողջ խաղի ընթացքում: Հաջող ֆինանսական կառավարումը, ինչպես ֆուտբոլում, պահանջում է ռազմավարություն, հնարամտություն և տոկոսություն:

Հետևյալ ուսումնական ծրագիրը խաղին նախորդող մոդուլների շարք է: Նախքան Ֆինանսական ֆուտբոլ խաղալը, խորհուրդ ենք տալիս Ձեր աշակերտների, ուսանողների հետ ուսումնասիրել և լրացնել չորս կրթական մոդուլները, որպեսզի նրանք հաջող անցում կատարեն այն ֆինանսական հասկացություններին, որոնք ընդգրկվել են այս խաղում:

Մոդուլ 1 // ՍԿՍԻՐ ԽՆԱՅԵԼ ՉԵՆՑ ՉԻՄԱ

Համառոտ ակնարկ. այս դասին ուսանողները կսովորեն կարևորել արտակարգ իրավիճակների և երկարաժամկետ նպատակների համար միջոցներ խնայելը: Նրանք կբացահայտեն պատասխանատու ծախսումներին վերաբերող ռազմավարություններ, կիմանան խնայողական հաշիվների տեսակները, ինչպես նաև կիմանան ներդրումային հնարավորությունների ու ռազմավարությունների մասին:

Տարիքային խումբ. 18 տարեկան և բարձր

Տրամադրվող ժամանակ. 60 րոպե

Առարկա. տնտեսագիտություն, մաթեմատիկա, ֆինանսներ, անձնական ֆինանսներ, կյանքի հմտություններ

Ուսուցման նպատակներ.

- հասկանալ անձնական ֆինանսների ոլորտում հմտություններ ձեռք բերելու և փողը խելամտորեն կառավարելու կարևորությունը,
- սովորել, թե ինչպես է գումար խնայելը գումար բերում,
- հասկանալ արտակարգ իրավիճակների Ձեր ֆոնդն ստեղծելու կարևորությունը,
- ծանոթանալ գոյություն ունեցող խնայողական հաշիվների տեսակներին,
- իմանալ հիմնական ներդրումային հնարավորությունների ու ռազմավարությունների մասին:

Նյութեր. ծրագիրը վարողները կարող են վիկտորինան և գրավոր վարժությունները որպես բաժանվող նյութ տպել և պատճենել այս փաստաթղթի հետևի մասում: Հաճախ կիրառվող ֆինանսական եզրույթների համար աշակերտները կարող են օգտվել համացանցից, օգտագործել առցանց բառարան կամ օգտվել համացանցից:

Գործնական վարժությունների պատասխանները այս փաստաթղթի վերջին էջում են:

Մոդուլ 1 // Ուղեցույց

Ֆուտբոլային պահումը կամ «սեյվը» հաճախ խաղի ամենադրամատիկ պահն է, երբ դարպասապահը վերջին վայրկյաններին հասցնում է փակել գնդակի ճանապարհը, և ամբոխը բուռն կերպով է արձագանքում դրան: Օրվա խաղի այսօրինակ հերոսական, բայց և անցողիկ սխրանքներից պակաս կարևոր չեն նաև խաղացողների ամենօրյա վարժանքները: Դաշտում առավել հաջող խաղացողները հաճախ ամենակարգապահ խաղացողներն են, ովքեր հենց սկզբից են իրենց մեջ ձևավորել մարզումներ անցկացնելու լավ սովորություններ և շարունակում են մարզվել նույն սկզբունքով: Ֆինանսական ամրապնդությունը ոչնչով չի տարբերվում: Ամենակարևոր հատկություններից մեկը, որ երիտասարդը կարող է յուրացնել, ծախսերը պատասխանատու կերպով կատարելու և գումարներ խնայելու սովորությունն է: Գումար խնայելը զուցե և այնքան հետաքրքրաշարժ չէ, որքան վերջին պահին դարպասը փրկելը և խաղը հաղթելը, սակայն սա մի հմտություն է, որը կօգնի ուսանողներին հաղթել կյանքի խաղում՝ հաճախել համալսարան, եթե դա է նրանց ընտրությունը, հասնել ֆինանսական անկախության, իրենց ֆինանսական նպատակներին:

Զննարկումը մեկնարկեք, ուսանողներին հարցնելով այն մասին, թե արդյոք նրանց մեջ կա մեկը, ով գումար է խնայում, և եթե այդպես է, ապա ինչի համար է նա դա անում: Իմացե՛ք նրանց կարծիքը, թե որքան ժամանակ է հարկավոր, որպեսզի նրանք հասնեն իրենց նպատակին: Տունը տվե՛ք, որ, գումար խնայելով, նրանք կարող են կարևոր փոփոխություն մտցնել իրենց կյանքում, ինչը թույլ կտա ձեռք բերել բնակարան, հաճախել համալսարան կամ պատրաստ լինել արտակարգ իրավիճակներին: Շարունակե՛ք քննարկումը՝ ներկայացնելով խնայելու տարբեր եղանակները և բացատրելով, թե ինչպես են գործում խնայողությունները:

Խնայողություններին վերաբերող հիմնական եզրույթները և հասկացությունները

(Թավատառերով ցույց են տրվում գործածված բառապաշարի կարևոր եզրույթները: Կարելի է ուսանողներին որպես լրացուցիչ գրավոր վարժություն հանձնարարել այդ եզրույթների բացատրությունը:)

Ինչու՞ է պետք գումար խնայել

Գումար խնայելը կյանքի առավել կարևոր հմտություններից մեկն է, որ Դուք կարող եք սովորել Ձեր ողջ կյանքի ընթացքում: Այն Ձեզ թույլ կտա.

- հասնել կարճաժամկետ կոնկրետ նպատակներին (օրինակ՝ գնել նոր տեսախաղ կամ հեծանիվ),
- պատրաստ լինել անսպասելի ծախսերի (օրինակ՝ հեծանիվի վերանորոգման ծախսեր),
- պլանավորել ապագայի նպատակները (օրինակ՝ խնայել ուսում ստանալու կամ մեքենա ձեռք բերելու համար):

Հանձնարարե՛ք ուսանողներին մտածել և ներկայացնել կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների, ինչպես նաև չնախատեսված ծախսերի այլ կոնկրետ օրինակներ:

Որքան պետք է խնայել

Ձեր աշակերտները, հնարավոր է, որ փոքր չափերով, սակայն արդեն խնայում են գումար խնայատուփում կամ բանկային հաշվում: Հարցրե՛ք նրանց՝ իրենց կարծիքով իրենց փողի որ մասն են նրանք խնայում: Ահա խնայողության վերաբերյալ որոշ խորհուրդներ.

- մասնագետներն առաջարկում են խնայել ամբողջ եկամտի առնվազն 10%-ը:
- եթե Դուք չափահաս եք և ապրում եք սեփական միջոցներով, ապա պետք է արտակարգ իրավիճակների Ձեր ֆոնդում ունենաք առնվազն վեց ամսվա ապրուստի համար կուտակված միջոցներ:

Մոդուլ 1 // Ուղեցույց (շարունակելի)

- Արտակարգ իրավիճակների Ձեր ֆոնդի առկայությունն ապահովության զգացում է տալիս և հնարավորություն տալիս դիմակայել այնպիսի անցանկալի իրադարձությունների, ինչպիսիք կարող են լինել հիվանդանալը, աշխատանքը կորցնելը կամ մեքենա վերանորոգելը:

Խնայելու եղանակները

Խնայողության առաջին կանոնը. Առաջին հերթին վճարիի քեզ: Այլ կերպ ասած՝ ձեր բազաում վեճ գնումներ կատարելուց հետո միայն ստուգելու սովորությունից, թե արդյոք խնայելու համար գումար մնացել է, թե ոչ: Փոխարենը լավ կլինի գումարը հենց սկզբից մի կողմ դնել: Հակառակ դեպքում Դուք երբեք ի վիճակի չեք լինի խնայել:

Ծախսեք խելամոռեն: Գումար խնայել սկսելու հասարակ եղանակ է Ձեր ծախսումների հարցում ավելի ուշադիր լինելը. փոխեք խնայելուն խանգարող Ձեր վարքագիծը: Երբ գնումներ եք կատարում, ընդունված որոշ ռազմավարություններ կարող են Ձեզ օգնել վստահ լինել ծախսերի խելամոռության հարցում: Օրինակ՝ համեմատեք գները, ստուգեք, թե որքանով է ձեռք բերված իրով կամ ապրանքով ստացած բավարարվածությունն արդարացնում կատարած ծախսը: Դիտարկեք նաև խնայելու մի քանի այլ հեշտ ուղիներ.

- ցերեկային ժամերն անցկացրեք զբոսայգում (եթե այն անվճար է)՝ արագ սննդի սպասարկման կետ մտնելու փոխարեն (խնայողությունը կկազմի 800-1500 դրամ),
- Կինոթատրոն գնալու տարբերակը (մոտ 2500 դրամ՝ փոփոխելով և զազավորված ըմպելիքով) կարող է փոխարինել վարձույթով ձեռքբերված կամ ներբեռված ֆիլմի դիտումով (կկազմի 500 դրամ):

Գրատախտակին թվարկեք այս շաբաթ ուսանողների կողմից կատարված մի քանի առօրյա ծախսեր և փոխարինեք դրանք պակաս ծախսատարներով: Որքան գումար կարող էին Ձեր խմբի անդամները միասնաբար խնայել այս շաբաթ:

Ու՞ր դնել խնայած գումարը

Բացատրեք ուսանողներին, որ թե՛ արտակարգ իրավիճակների Ձեր ֆոնդի, թե՛ երկարաժամկետ նպատակների համար լավ խնայողական պլանի ձևավորման մաս է գումարը լավագույն պայմաններով ի պահ տալու վայրի ճիշտ ընտրությունը, ինչը խնայողություններն ավելացնելու գրավականն է: Մետաղադրամների խնայատուփերը հարմար են մանրադրամի համար, իսկ եթե շատ ավելի լուրջ եք տրամադրված խնայողության հարցում, ուրեմն կարող եք դիտարկել բանկային ավանդային հաշիվ ունենալու հնարավորությունը: Սա Ձեր գումարը ապահով պահելու գործիք է, որն առաջարկվում է բանկերում:

Այժմ, երբ արդեն գիտեք, թե որտեղ կարելի է հաշիվ բացել, եկեք ավելի մանրամասն ուսումնասիրենք, թե ինչպես են խնայողությունները գործում: Նախևառաջ, այստեղ օգտագործվել են մի քանի եզրույթներ.

Ավանդային հաշվում **ավանդի գումարը կամ մայր գումարն** այն գումարն է, որը Դուք ներդնում եք Ձեր հաշվի վրա՝ որպես խնայողություն:

Դուրսբերումը հաշվից գումար հանելն է:

Ավանդի համալրումը Ձեր ավանդային հաշվի վրա գումարի ավելացումն է:

Միջոցները տանը՝ խնայատուփում, և բանկում բացված բանկային ավանդային հաշվում պահելու միջև եղած հիմնական տարբերությունն այն է, թե ինչ եղանակով է աճում ավանդի գումարը (Ձեր գումարը): Տանը գումարն աճում է միայն այն ժամանակ, երբ Դուք գումար եք ավելացնում (համալրում եք) արկղիկում եղած գումարի (մայր գումարի) վրա: Ավանդային հաշվի պարագայում Ձեր գումարն

Մոդուլ 1 // Ուղեցույց (շարունակելի)

աճում է ոչ միայն այն ժամանակ, երբ Դուք համալրում եք ավանդը, այլևս այն ժամանակ, երբ ավանդի գումարի վրա տոկոսագումար է կուտակվում: Տոկոսագումարը գումար է, որը բանկը վճարում է Ձեզ՝ Ձեր ավանդային հաշիվն իր մոտ թողնելու համար, կարծես՝ Դուք Ձեր գումարը փախսառության ձևով հանձնել եք բանկին: Դուք Ձեր գումարը տալիս եք ի պահ, և նրանք դրա դիմաց տոկոսագումար են վճարում: Այդպես Ձեր գումարն աճում է: Փողի գումարային այս օգուտը, որով չափվում է ձեր ներդրումը, կոչվում է եկամտաբերության դրույք (rate of return): Բանկը Ձեզ տոկոսագումար է վճարում և դրա դիմաց ստանում Ձեր փողն օգտագործելու, այսինքն՝ այլ անձանց վարկերի տեսքով տրամադրելու կամ ներդրումներ կատարելու իրավունք:

Տոկոսադրույքը Ձեր ավանդային գումարի տոկոսով արտահայտված այն մասն է, որը բանկը պարտավորվում է վճարել՝ ավելացնելով Ձեր ավանդային հաշիվը: Տոկոսադրույքը հաճախ հիշատակվում է որպես SSE կամ տարեկան տոկոսային եկամտաբերություն:

Ինչպես է հաշվարկվում պարզ տոկոսը

Մայր գումար x տոկոսադրույք x ժամկետ = տոկոսագումար

Օրինակ՝ Դուք 100 000 դրամով ավանդային հաշիվ եք բացում 10% տարեկան պարզ տոկոսադրույքով: Ինչ տոկոսագումար կունենաք առաջին տարում:

$100\,000 \text{ դրամ} \times 0,1 \times 1 = 10\,000 \text{ դրամ տարեկան տոկոսագումար}$

Բարդ տոկոս այն է, ինչն իրապես նպաստում է ինսայդդության ավելացմանը: Երբ Ձեր տոկոսը դառնում է բարդ, տոկոսագումարը գումարվում է Ձեր հաշիվն և դառնում Ձեր ավանդի գումարի մաս: Որքան մեծանում է ավանդի գումարը, այնքան Ձեր հաշիվն ավելի շատ տոկոսագումար է վաստակում, ինչն էլ շարունակաբար գումարվում է նոր ավանդային գումարին: Սա մի հզոր ցիկլ է, որը, իսկապես, ավելացնում է Ձեր ինսայդդությունները:

Պարզ տոկոսի հաշվարկի վերոհիշյալ օրինակում, 100 000 դրամը տարեկան 10% տարեկան պարզ տոկոսադրույքով յուրաքանչյուր տարի վաստակում է 10 000 դրամ տոկոսագումար: Սակայն, եթե այդ տոկոսը դառնա բարդ, ապա 10 000 դրամ տոկոսագումարը, որը Դուք կվաստակեք առաջին տարում, կգումարվի ավանդի գումարին երկրորդ տարվա սկզբին: Այս գործողությամբ Դուք ավելի բարձր տոկոսագումար կվաստակեք երկրորդ տարում (11 000 դրամ) և այդպես դրանից ավելի շատ յուրաքանչյուր հաջորդ տարում:

$100\,000 \text{ դրամ} \times 0,1 \times 1 = 10\,000 \text{ դրամ տոկոսագումար առաջին տարում}$

$110\,000 \text{ դրամ} \times 0,1 \times 1 = 11\,000 \text{ դրամ տոկոսագումար երկրորդ տարում}$

Նշենք նաև, որ այդ վաստակած տոկոսագումարները հարկվում են եկամտային հարկով (այս տիպի եկամտի համար սահմանված է 10%):

72-ի կանոնը

Ցանկանում եք իմանալ, թե որքան արագ Ձեր գումարը կկրկնապատկվի: 72-ի կանոնի միջոցով կարելի է արագորեն հաշվարկել, թե որքան ժամանակ կպահանջվի, որպեսզի բարդ տոկոսով Ձեր ինսայդդությունները կրկնապատկվեն: Ինչպե՞ս է այն հաշվարկվում.

$72\text{-ը բաժանած տվյալ տոկոսադրույքի} = \text{տարիների այն թվաքանակ, որն անհրաժեշտ է Ձեր մայր գումարը կրկնապատկելու համար:}$

Հետևաբար, եթե Ձեր տոկոսադրույքը կազմում է 10% և ուզում եք իմանալ, թե որքան ժամանակ կպահանջվի, որպեսզի Ձեր ավանդային գումարը կրկնապատկվի, կգործի հետևյալ հավասարումը.

Մոդուլ 1 // Ուղեցույց (շարունակելի)

72-ը բաժանած 10-ի = 7.2 տարի

Խնայողությունների տեսակները և ինչպե՞ս ընտրել դրանք

Այն ընթացքում, երբ գնահատում եք, թե որտեղ կարելի է պահել խնայողությունները, Դուք պետք է ուսումնասիրեք բանկերը՝ համեմատելով առաջարկվող ծառայությունները և դրանց դիմաց գանձվող վճարների տեսակները: Դուք պետք է նաև որոշեք, թե խնայողական գործիքների հր տեսակն է, որ կարող է Ձեզ համար կատարյալ տարբերակ լինել:

Գոյություն ունեն խնայողական միջոցների ներդրման բազում գործիքներ՝ ավանդական հաշիվները, խնայողական հաշիվները, ուսանողական ավանդները, կենսաթոշակային հաշիվները և այլն: Ճիշտ տեսակն ընտրելու համար ընդամենը մի քանի քայլ պետք է կատարել.

որոշել, թե ինչի համար եք գումարը խնայելու:

Որոշել, թե ինչ աստիճանի հասանելիություն եք ուզում ունենալ Ձեր գումարին: Դա կոչվում է իրացվելիություն:

Որոշել, թե որքան գումար եք ներդնելու:

Գտնել լավագույն տոկոսադրույքն առաջարկող և ամենացածր վճարները գանձող հաշիվը:

Բարձր իրացվելիությունը նշանակում է, որ Ձեր գումարը կարող է ազատ շարժվել, իրացվել: Օրինակ, եթե Դուք ուզում եք մշտական հնարավորություն ունենալ բանկումատից նույն պահին գումար դուրս բերել, ուրեմն Ձեզ հարկավոր է բարձր իրացվելիությամբ հաշիվ:

Որպես կանոն, ավանդական խնայողական հաշիվը կամ ընթացիկ հաշիվը ապահովում է ամենաբարձր իրացվելիություն: Այս երկուսից՝ խնայողական հաշիվը սովորաբար ավելի լավ տոկոսադրույք է առաջարկում, քան ընթացիկ հաշիվը:

Եթե Դուք չեք գրելու կամ բանկումատից գումար դուրս հանելու կարիք չունեք և կարող եք երկար ժամանակով ձեռք չտալ Ձեր ավանդի գումարին, ուրեմն կարելի է դիտարկել երկարաժամկետ ավանդները, արժեթղթերում կատարվող ներդրումները, իսկ արտասահմանում նաև ԱՅ կամ Ավանդային Հավաստագիր գործիքն ունենալու տարբերակը: Որքան երկար ժամանակով եք համաձայնում թողնել Ձեր գումարը, այնքան ավելի լավ տոկոսադրույք է առաջարկվում դրա դիմաց: Սակայն, եթե պետք է գումարը հանել մինչև համաձայնեցված ժամանակը լրանալը, Դուք, ամենայն հավանականությամբ, կարող եք կորցնել վաստակած տոկոսագումարների մի մասը կամ ամբողջությամբ: Ներթրեքրյալ գիծն ընդհանուր ուղեցույց է տարբեր խնայողական ապրանքների համար:

Առավել իրացվելի

Որպես ավանդ ներդրվող ավելի պակաս գումար
Ավելի ցածր տոկոսադրույք

Պակաս իրացվելի

Ավելի շատ ներդրվող գումար
Ավելի բարձր տոկոսադրույք



Ընթացիկ հաշիվ, Խնայողական հաշիվ, Երկարաժամկետ ավանդ, Արժեթղթերում ներդրումներ

Ի դեպ, հավելենք նաև, որ ավանդների ընտրության հարցում Ձեզ կարող է օգնել կայքում առկա Ֆինանսական օգնական գործիքը, որտեղ կարող եք մուտքագրել Ձեր պահանջները, ստանալ շուկայում առկա Ձեզ ամենահարմար առաջարկները:

Ո՞ր ներդրումն է ինձ համար ճիշտ տարբերակ

Կախված նրանից, թե ինչ ներդրումային տարբերակներ են ընտրում ուսանողները, վերջնական

Մոդուլ 1 // Ուղեցույց (շարունակելի)

արդյունքը կարող է միանգամայն տարբեր լինել: Կատարելով խելամիտ ներդրումային ընտրություն և սկսելով երիտասարդ տարիքում Դուք կարող եք ժամանակի ընթացքում առավելագույն մեծությունների հասցնել երկարաժամկետ խնայողությունները և ավելացնել հարստությունը: Ներդրումային հնարավորություններն ուսումնասիրելիս հիմնականում դիտարկվում են երեք ներդրումային գործիքներ՝ պարտատոմսերը, ներդրումային ֆոնդերը և բաժնետոմսերը:

Պարտատոմսերը ներդրումների տեսակ են, որի դեպքում Դուք Ձեր գումարը փոխառության եք տալիս կառավարությանը կամ կորպորացիային՝ սահմանված որոշակի տոկոսադրույքով և մարման ժամկետով: Պարտատոմսերը, ներդրումային այլ գործիքների հետ համեմատած, ավելի ցածր ռիսկայնություն ունեն, թեև ռիսկի աստիճանը տատանվում է՝ պայմանավորված նրանով, թե ով է թողարկողը, ինչպես նաև այլ գործոններով: Պարտատոմսերը սովորաբար ավելի մեծ կայունություն են ապահովում, քան բաժնետոմսերը, և ավելի բարձր տոկոսադրույքներ ունեն, քան խնայողական հաշիվները:

Բաժնետոմս ձեռք բերելու պարագայում Դուք ձեռք եք բերում ընկերության սեփականության մի մասը: Զանի որ ֆոնդային շուկան պարբերաբար տատանումներ է ունենում, բաժնետոմսերը, ընդհանուր առմամբ, ավելի ռիսկային են համարվում, քան պարտատոմսերը կամ ներդրումային ֆոնդերը, սակայն կարող են նաև ապահովել ավելի բարձր եկամտաբերություն: Կարևոր է հիշել, որ, երբ ներդրումներ եք անում ֆոնդային շուկայում, չկա երաշխիք, թե Դուք անպայման գումար կվաստակեք: Ավելին, միշտ կա վտանգ, որ կարող եք կորցնել Ձեր ներդրած գումարը:

Ներդրումային ֆոնդերը ներդրումների մեկ այլ տեսակ են: Սրանք իրենցից ներկայացնում են տարբեր ներդրողներից հավաքած միջոցների համախմբավորում՝ բաժնեմասերում, պարտատոմսերում և այլ ակտիվներում ներդրումներ կատարելու համար: Չնայած նրան, որ ներդրումային ֆոնդերը հնարավորություն են տալիս ռիսկայնության որոշակի մակարդակ սահմանել՝ հիմնվելով ընտրված ֆոնդի տեսակի վրա, ամեն դեպքում Ձեր ֆոնդի եկամուտը չի երաշխավորվում: Բացի դրանից՝ ներդրումային ֆոնդերի կառավարման համար կարող են պահանջվել ծախսեր:

Մոդուլ 1 // Զննարկում

Մենք խոսեցինք ինսայողական պրոդուկտների մի քանի առավել տարածված տեսակների մասին: Իսկ թե որն է Ձեզ համար լավագույնը, պայմանավորված կլինի տարբեր գործոններով. ինչի համար եք խնայում, որքան զգայուն եք ռիսկի պարագայում և իրացվելիության ինչպիսի աստիճան եք ցանկանում ունենալ Ձեր ինսայողությունների նկատմամբ: Դիտարկեք, թե ինսայողական հաշվի դր տեսակը կարող է լինել լավագույնը.

Եթե Ձեր տատիկը բժշկական խնդիրներ ունի, և Ձեր կարծիքով հաջորդ տարում կարող է կարիք լինել բժշկական անակնկալ այցելությունների, ուստի նաև կլինեն ծախսեր:

[լավագույն պատասխանը՝ ընթացիկ կամ ինսայողական հաշիվ և ոչ թե երկարաժամկետ ներդրումներ:]

Այս օրինակով որքան է կարևորվում Ձեր միջոցների նկատմամբ իրացվելիությունը:

[լավագույն պատասխանը՝ կարևոր է: Միջոցները պետք է հասանելի լինեն առանց տուգանքների:]

Եթե Դուք ցանկանում եք ինքնաթիռի տոմս գնել և հինգ տարի հետո մեկնել մեկ այլ երկիր՝ նշելու Ձեր մայրիկի և հայրիկի ամուսնության 30-ամյա հոբելյանը:

[լավագույն պատասխանը՝ ամենալավ տոկոսադրույքը հավանաբար առաջարկում է երկարաժամկետ ավանդը կամ ներդրումները:]

Եթե Դուք ցանկանում եք Նոր հեծանիվ գնել հետագա վեց ամիսների ընթացքում:

[լավագույն պատասխանը՝ ինսայողական հաշիվ:]

Եթե Դուք ուզում եք որոշակի լրացուցիչ գումար ունենալ՝ զեղչերի օրերին որոշ գնումներ կատարելու համար:

[լավագույն պատասխանը՝ ընթացիկ և ինսայողական հաշիվները հավանաբար ամենալավ տարբերակն է, քանի որ միջոցները արագ հասանելի են:]

Մոդուլ 1 // Վիկտորինա

Պատասխանեք հետևյալ հարցերին.

Ճիշտ թե սխալ. մայր գումարն այն գումարն է, որով Դուք ավանդային հաշիվ եք բացում:

Ճիշտ թե սխալ. իրացվելիությունը վերաբերում է նրան, թե որքան է Ձեր գումարը հասանելի Ձեզ համար:

Ո՞ր գործիքն է ավելի շատ տոկոսագումար ապահովում՝ ինսայդական հաշիվը, թե՞ երկարաժամկետ ավանդը:

Ճիշտ թե սխալ. ինսայդության խելամիտ կանոն է՝ «Վերջին հերթին վճարիր քեզ»:

Ինչպե՞ս է բացվում SՏԵ հապավումը և ի՞նչ է այն նշանակում:

Ինչպե՞ս է կոչվում կանոնը, որն օգնում է որոշել, թե որքան ժամանակ է պահանջվում, որպեսզի Ձեր գումարը կրկնապատկվի:

Նշե՞ք երեք հիմնական պատճառներ, որոնց համար մարդիկ գումար են ինսայում:

Ճիշտ թե սխալ. եթե Դուք ուզում եք մշտական հասանելիություն ունենալ Ձեր միջոցներին, ապա ընթացիկ և ինսայդական հաշիվները ինսայդության լավ տարբերակներ է:

Ճիշտ թե սխալ. արժեթղթերում ներդրումները ինսայդության լավ տարբերակներ են, եթե Դուք կարող եք բավականաչափ երկար ժամանակով փողին ձեռք չտալ:

Ճիշտ թե սխալ. արտակարգ իրավիճակների Ձեր ֆոնդում երկամյա ապրուստի ծախսեր ունենալը կարևոր է:

Ո՞րն է սովորաբար ավելի ռիսկային ներդրումային տարբերակ համարվում՝ բաժնետոմսը, թե՞ պարտատոմսը:

Ճիշտ թե սխալ. երբ Դուք ներդրումներ եք անում ֆոնդային շուկայում, չկա երաշխիք, որ գումար եք վաստակելու Ձեր ներդրումների դիմաց, սակայն Դուք երաշխավորված եք ետ ստանալու ի սկզբանե ներդրած գումարը:

Մոդուլ 1 // Գրավոր վարժություններ

Բարդ տոկոս.

հետևյալ բանաձևը ցույց է տալիս, թե ինչպես հաշվարկել բարդ տոկոսը տարեկան կտրվածքով:

Տարի 1.

$$\text{Մայր գում.} \times \text{Տոկոսադր. (օր` 10\% = 0.1)} = \text{Տոկոսագումար} + \text{Մայր գում.} \times \text{Նոր մայր գում. հաջորդ տարվա համար}$$

Տարի 2.

$$\text{Մայր գում.} \times \text{Տոկոսադր. (օր` 10\% = 0.1)} = \text{Տոկոսագումար} + \text{Մայր գում.} \times \text{Նոր մայր գում. հաջորդ տարվա համար}$$

Տարի 3.

$$\text{Մայր գում.} \times \text{Տոկոսադր. (օր` 10\% = 0.1)} = \text{Տոկոսագումար} + \text{Մայր գում.} \times \text{Նոր մայր գում. հաջորդ տարվա համար}$$

Հիմնվելով բարդ տոկոսի համար հաշվարկված վերոհիշյալ բանաձևի վրա՝ որքան ընդհանուր խնայողություններ Դուք կունենաք՝

Եթե 100 000 դրամ ներդնեք 3% ՏՏԵ և 2 տարի ժամկետ առաջարկող ավանդային հաշվում:

Եթե 500 000 դրամ ներդնեք 5% ՏՏԵ և 3 տարի ժամկետ առաջարկող արժեթղթում:

Մոդուլ 1 // Գրավոր վարժություններ (շարունակելի)

Գործածելով **72-ի կանոնը** կարելի է հեշտ եղանակով ստանալ այն մոտավոր հաշվարկը, թե որքան արագ Ձեր գումարը կարող է աճել ֆիքսված բարդ տոկոսադրույքով: Այսինքն՝ 72-ը բաժանեք գործող տոկոսադրույքի և ստացած պատասխանը Ձեզ կհուշի այն տարիների թվաքանակը, որն անհրաժեշտ է, որպեսզի Ձեր գումարը կրկնապատկվի: Դուք նաև կարող եք 72-ը բաժանել Ձեր գումարի կրկնապատկման համար պահանջվող տարիների թվաքանակով, որպեսզի ստանաք դրա համար կիրառվող տոկոսադրույքը:

Ահա 72-ի կանոնի գործածման մի քանի օրինակներ.

5% տոկոսադրույքի դեպքում պահանջվելու է $72 \div 5$ կամ 14.4 տարի, որպեսզի Ձեր գումարը կրկնապատկվի:

Որպեսզի Ձեր գումարը կրկնապատկվի 10 տարում, Ձեզ հարկավոր է հետևյալ տոկոսադրույքը՝ $72 \div 10$ կամ 7.2%:

Եկեք տեսնենք 72-ի կանոնը գործնականում.

	Եկամտաբերության դրույք	Տարիների քանակ
72-ը բաժանած	3%	
72-ը բաժանած	5%	
72-ը բաժանած		6
72-ը բաժանած		15

72-ի կանոնը պարզեցված բանաձև է, այն նախատեսված է միայն մոտավոր հաշվարկի համար, քանի որ տոկոսադրույքի աճին զուգընթաց նվազում է բանաձևի ճշգրտությունը:

Մոդուլ 1 // Պատասխաններ

Վիկտորինայի պատասխաններ.

1. Ճիշտ
2. Ճիշտ
3. Երկարաժամկետ ավանդը
4. Սխալ
5. Տարեկան տոկոսային եկամտաբերություն, տվյալ հաշվի համար գործող տոկոսադրույքը՝ հաշվի առնելով կապիտալացումների հաճախականությունները, առկա վճարները:
6. 72-ի կանոնը
7. Կոնկրետ նպատակի իրագործման, ապագայի երկարաժամկետ պլանների կամ անսպասելի իրադարձություններին պատրաստ լինելու համար:
8. Ճիշտ
9. Ճիշտ
10. Սխալ
11. Բաժնետոմսեր
12. Սխալ

Բարդ տոկոսի պատասխաններ.

Եթե 100 000 դրամ ներդնեք 3% ՏՏԵ և 2 տարի ժամկետ առաջարկող խնայողական հաշվում՝

$$100\ 000\ \text{դրամ} \times 0.03 = 3\ 000\ \text{դրամ},\ 3\ 000\ \text{դրամ} + 100\ 000\ \text{դրամ} = 103\ 000\ \text{դրամ}$$

$$103\ 000\ \text{դրամ} \times 0.03 = 3\ 090\ \text{դրամ},\ 3\ 090\ \text{դրամ} + 103\ 000\ \text{դրամ} = 106\ 090\ \text{դրամ}$$

Եթե 500 000 դրամ ներդնեք 5% ՏՏԵ և 3 տարի ժամկետ առաջարկող ԱԳ-ում՝

$$500\ 000\ \text{դրամ} \times 0.05 = 25\ 000\ \text{դրամ},\ 25\ 000\ \text{դրամ} + 500\ 000\ \text{դրամ} = 525\ 000\ \text{դրամ}$$

$$525\ 000\ \text{դրամ} \times 0.05 = 26\ 250\ \text{դրամ},\ 26\ 250\ \text{դրամ} + 525\ 000\ \text{դրամ} = 551\ 250\ \text{դրամ}$$

$$551\ 250\ \text{դրամ} \times 0.05 = 27\ 563\ \text{դրամ},\ 27\ 563\ \text{դրամ} + 551\ 250\ \text{դրամ} = 578\ 813\ \text{դրամ}$$

72-ի կանոնի պատասխաններ.

	Եկամտաբերության դրույք	Տարիների քանակ
72-ը բաժանած	3%	24
72-ը բաժանած	5%	14
72-ը բաժանած	12%	6
72-ը բաժանած	4.8%	15



Ֆինանսական Ֆուտբոլ

Մոդուլ 2 // ԲՅՈՒՋԵՆ ԶԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄ ԵՆ
Միջազգային մակարդակ: 18 տարեկան և բարձր

Մոդուլ 2 // «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼ» ԵՐԱԳԻՐ

Ֆինանսական ֆուտբոլը կրթական տեսախաղ է, որը նախատեսված է անձնական ֆինանսների հիմունքների մասին ավելի գիտելիքներ կուտակելու համար:

Այն մշակվել է այն տրամաբանությամբ, որ խաղերը կարող են լինել ուսուցման արդյունավետ գործիքներ: Ֆինանսական ֆուտբոլը աշակերտներին, ուսանողներին ներգրավում է զվարճալի, հաճելի զբաղմունքում՝ միաժամանակ տալով նրանց գիտելիքներ այնպիսի թեմաներով, որոնք էական են կյանքի կարևոր հմտություններ յուրացնելու համար:

Ֆինանսական ֆուտբոլը բարդության տարբեր մակարդակների հարցեր է առաջադրում ողջ խաղի ընթացքում: Հաջող ֆինանսական կառավարումը, ինչպես ֆուտբոլում, պահանջում է ռազմավարություն, հնարամտություն և տոկոսություն:

Հետևյալ ուսումնական ծրագիրը խաղին նախորդող մոդուլների շարք է: Նախքան Ֆինանսական ֆուտբոլ խաղալը, խորհուրդ ենք տալիս Ձեր աշակերտների, ուսանողների հետ ուսումնասիրել և լրացնել չորս կրթական մոդուլները, որպեսզի նրանք հաջող անցում կատարեն այն ֆինանսական հասկացություններին, որոնք ընդգրկվել են այս խաղում:

Մոդուլ 2 // ԲՅՈՒՋԵՆ ԶԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄ ԵՆ

Համառոտ ակնարկ. անձնական միջոցների արդյունավետ կառավարումը պահանջում է խնայողությունների ու ծախսերի քայլ առ քայլ պլանավորում, ծրագրում: Այդ ծրագիրը կոչվում է բյուջե: Այս դասին ուսանողները պետք է հստակ պատկերացում կազմեն այն մասին, թե ինչու է կարևոր բյուջեի պլանավորումը և իմանան, թե ինչպես պետք է ստեղծել և վարել բյուջեն: Նրանք կբացահայտեն զուտ և համախառն եկամուտների տարբերությունը և կսովորեն տարբերակել եկամտի հոդվածները և մյուսները: Բացի դրանից՝ ուսանողները կառնչվեն ֆինանսական որոշումների կայացման լայնածավալ գործընթացներին և կսովորեն ծախսերի կատարման խելամիտ ռազմավարություններ:

Տարիքային խումբ. 18 տարեկան և բարձր

Տրամադրվող ժամանակ. 60 րոպե

Առարկա. տնտեսագիտություն, մաթեմատիկա, ֆինանսներ, անձնական ֆինանսների կառավարում, կիրառական հմտություններ

Ուսուցման նպատակներ.

- իմանալ ֆինանսական պատասխանատվության հիմնական տարրերը,
- առանձնացնել և ուսումնասիրել ծախսելու ներկայիս սովորությունները,
- առանձնացնել ինքնուրույն ապրելու հետ կապված զանազան ծախսերը,
- որոշել «անհրաժեշտ է» և «ուզում եմ» հասկացությունների տարբերությունը,
- հասկանալ կապը բյուջեի և խնայողական նպատակների միջև,
- սահմանել ֆինանսական նպատակներ,
- հասկանալ, թե բարեգործական նվիրաբերումն ինչ դեր կարող է ունենալ բյուջեում:

Նյութեր. ծրագիրը վարողները կարող են վիկտորինան և գրավոր վարժությունները որպես բաժանվող նյութ տալ և պատճենել այս փաստաթղթի հետևի մասում: Հաճախ կիրառվող ֆինանսական եզրույթների համար աշակերտները կարող են օգտվել համացանցից, օգտագործել առցանց բառարան կամ օգտվել համացանցից:

Գործնական վարժությունների պատասխանները այս փաստաթղթի վերջին էջում են:

Մոդուլ 2 // Ուղեցույց

Հավասարակշռությունը հմտությունն է, որը վճռական դերակատարում ունի ֆուտբոլում: Խաղացողները պետք է կարողանան ճշգրտորեն տիրապետել իրենց մարմնի (ոտքեր, պարանոց և գլուխ) և գնդակի միջև փոխազդեցության կանոններին, ինչպես նաև կարողանան դա օգտագործել՝ մրցակցի նկատմամբ առավելության հասնելու համար: Հավասարակշռությունը նույնքան կարևոր է անձնական միջոցները կառավարելու համար: Դուք պետք է կարողանաք ստեղծել և պահպանել հավասարակշռություն փողի մուտքի և ելքի միջև, ինչից հետո միայն կկարողանաք դիտարկել այդ ելումուտը և տեսնել, թե որքանով է այն հավասարակշռված: Եթե Դուք ծախսում եք ավելին, քան վաստակել եք (կես դրոյբաչափ աշխատանքի, ծնողներից ստացած գումարների կամ նվերների միջոցով), ուրեմն Ձեր բյուջեն հավասարակշռությունից դուրս է, և Դուք դժվարություններ կունենաք գումար խնայելու և Ձեր ֆինանսական նպատակներին հասնելու ճանապարհին:

Բյուջեն ֆինանսական պլան է, որը հաշվարկում է Ձեր եկամուտը (գումարը, որ վաստակել եք) և որոշում, թե որտեղ է ծախսվում Ձեր գումարը: Սա Ձեր վարքագիծը ի ցույց դնելու արդյունավետ միջոց է և օգնում է հասկանալ՝ արդյոք ավելին եք ծախսում որոշակի ապրանքների վրա կամ ի վիճակի եք խնայել ավելին, քան դա Ձեզ հաջողվում է ներկայումս: Այն նաև կարևոր գործիք է՝ ֆինանսական նպատակներին հասնելու համար:

Եկեք ավելի մանրամասն զննենք բյուջեի այս բաղադրիչներից յուրաքանչյուրը: *(Այս դասի ընթացքում թավատառերով ցույց են տրվում գործածված բառապաշարի կարևոր եպրոյթները: Կարելի է ուսանողներին որպես լրացուցիչ գրավոր վարժություն հանձնարարել այդ եպրոյթների բացատրությունը:)*

ԵԿԱՄՈՒՏ

Եկամուտը վճար է, որ ստանում են ապրանքների կամ ծառայությունների տրամադրման, այդ թվում՝ աշխատանքի և նպաստի դիմաց: Եկամուտ է համարվում նաև այն գումարը, որ Դուք վաստակում եք խնայողություններից կամ ներդրումներից (ինչպիսիք են՝ տոկոսները, շահաբաժինները կամ ֆոնդային բաժնետոմսերի վաճառքից ստացած հասույթը): Երբ Դուք ունեք աշխատանք, ապա այն, ինչ վաստակում եք, կոչվում է համախառն եկամուտ: Սա այն ընդհանուր գումարն է, որ Դուք վաստակել եք մինչև հարկումը: Համախառն աշխատավարձից հարկերի և աշխատավարձի գծով մյուս բոլոր նվազեցումները կատարելուց հետո ձեզ է մնում այն գումարը, որ կոչվում է զուտ եկամուտ: Սա այն փաստացի գումարն է, որ մուտք է լինում տուն և որից էլ սկսվում է Ձեր բյուջեի ձևավորումը:

ԾԱԽՍԵՐ

Ծախսերն այն գումարներն են, որ վճարում են ապրանքների կամ ծառայությունների դիմաց: Վարձակալությունը, հագուստեղենի, սննդի համար ծախսվող միջոցները, հեռախոսավարձը ծախսերի օրինակներ են: Հարցրեք Ձեր ուսանողներին, թե ինչի վրա են ծախսում իրենց գումարները և որքան են ծախսում յուրաքանչյուր ամիս: Հարցրեք նրանց, թե ինչ օրինաչափություններ կան իրենց ծախսային սովորություններում ու վարքագծերում: Ինչու են նրանք ձեռք բերում այն, ինչ ձեռք են բերում, ինչն է ազդում նրանց որոշումների վրա:

ԿԱՐԻՔՆԵՐՆ ԸՆԴԴԵՍ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Իրատեսական բյուջեն պատկերացնելու հարցում կարևորագույն գործոնն այն է, որ Դուք պետք է կարողանաք տարանջատել իրերը, որոնց կարիքն ունեք և իրերը, որոնք ցանկանում եք ունենալ: Ձեր կարիքները բոլոր այն ամսական ծախսերն են, որոնք կապված են առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների հետ, որոնք կյանքը պահում են կայուն: Ձեր ցանկությունները ապրանքներ և ծառայություններ են, որոնք եական չեն առօրյա կյանքի համար, բայց դրանք հաճախ բաներ են, որոնք մարդկանց երջանկացնում են կամ կարող են, ըստ եության, կյանքն ավելի հեշտացնել կամ առանձնահատուկ դարձնել:

Մոդուլ 2 // Ուղեցույց (շարունակելի)

Երբ Դուք գումար եք ծախսում ձեռք բերելու համար այն, ինչը ցանկանում եք, և ոչ թե այն, ինչի կարիքը զգում եք, դա անվանում են **հայեցողական ծախսեր**:

Հայեցողական ծախսերի օրինակ են գազավորված ըմպելիքը և խորտիկն արագ սննդի կետում, կինոթատրոնի տոմսերը, ամառային արձակուրդը:

Կարիքներից ու ցանկություններից զատ ծախսերը տարբերակելու տարբերակ է նաև դրանք որպես հաստատուն և փոփոխուն դասակարգելը: Հաստատուն՝ դրանք նույն գումարն են կազմում ամեն ամիս, փոփոխուն՝ տատանվում են տարվա ընթացքում:

Հաստատուն ծախսերի օրինակներ են վարձավճարը, մեքենայի հետ կապված վճարները, ապահովագրավճարը:

Փոփոխական ծախսերի օրինակներ են սնունդի, վառելիքի, հագուստի ծախսը:

Ցանկություններն ու հայեցողական ծախսերը պարտադիր չէ, որ վատ բաներ լինեն: Ի դեպ, ցանկությունը կարող է գումար խնայելու հիմնադր շարժառիթ լինել: Այնուամենայնիվ, չափից ավելի հայեցողական ծախսերը հեշտությամբ կարող են փոշիացնել ամսական խնայողության հնարավորությունները: Մշտապես պատշաճ ուշադրության տակ պահելով հայեցողական ծախսեր կատարելու սովորությունը՝ խնայելու Ձեր հնարավորություններն ավելի են ընդլայնվում ու ճանաչելի դառնում:

Օգտվելով ստորև բերված քննարկումից՝ օգնեք ուսանողներին հասկանալ էական ծախսերի (անհրաժեշտություն) և հայեցողական ծախսերի (ցանկություններ) միջև եղած տարբերությունը:

ԳՏԵՆԸ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆ

Հասկանալու համար, թե որքան է Ձեր բյուջեն հավասարակշռված, պարզապես պետք է ի մի բերել Ձեր ամբողջ եկամուտը և դրանից հանել Ձեր բոլոր ծախսերը: Ստացած թիվը Ձեր զուտ օգուտն է կամ կորուստը:

Եթե զուտ գումարը դրական մեծություն է, դա լավ նշան է: Այն ցույց է տալիս, որ Դուք ապրում եք Ձեր եկամտի շրջանակում: Այն նաև նշանակում է, որ Դուք կարող եք անգամ ավելին հատկացնել՝ խնայողության կամ պարտքը մարելու համար:

Եթե զուտ գումարը, այնուամենայնիվ, բացասական մեծություն է, նշանակում է, որ Ձեր ամսական ծախսերը գերազանցում են ամսական եկամուտը, այլ կերպ ասած՝ Դուք գործում եք վնասով: Դուք պետք է ուղիներ փնտրեք՝ Ձեր բյուջեի ծախսային հոդվածները վերանայելու կամ եկամուտներն ավելացնելու համար (կամ երկուսը միասին), հակառակ դեպքում Դուք ավելի ու ավելի շատ պարտք կկուտակեք:

Հետևողականությունը բյուջեն հաջողությամբ կազմելու գործում առանցքային գործոն է: Ինչպես ֆուտբոլիստներն են պարտավոր ամենօրյա վարժանքներով բարձր մակարդակի վրա պահել իրենց հմտությունները, իսկ մարմինները՝ պատշաճ տեսքի, այնպես էլ կարևոր է թույլ չտալ, որ Ձեր բյուջեն թորշուժ տեսք ունենա: Բյուջեն յուրաքանչյուր ամիս վերստուգելով միայն կարելի է վստահ լինել, որ սեփական միջոցները խելամտորեն են կառավարվում:

Աշխատավարձի վերահսկում և հարկեր

Ձեր եկամտի ու բյուջեի վրա ազդեցություն թողնող գործոններից մեկը հարկն է: Եկամտային հարկը նվազեցվում է Ձեր համախառն եկամտից ճանապարհների, զբոսայգիների սպասարկման, ռազմական, կրթական, սոցիալական, բժշկական և այլ հանրային ծառայությունների տրամադրման հետ կապված ծախսերի համար: Յուրաքանչյուր նման նվազեցում արտացոլվում է Ձեր աշխատավարձի թերթիկում:

Տարբեր գործատուներ տարբեր եղանակներով են հնարավորություն տալիս աշխատողներին՝ ծանոթանալու իրենց ամսական աշխատավարձին, վճարված հարկերին: Դա կարող է լինել թղթային կամ

Մոդուլ 2 // Ուղեցույց (շարունակելի)

Էլեկտրոնային ձևով, սակայն դրանք վերահսկելը կարևոր է անձնական ֆինանսների տեսանկյունից:

Նշենք նաև, որ վճարվելիք հարկերի տեսանկյունից Դուք կարող եք ստանալ մի շարք առավելություններ, ինչպես օրինակ հիփոթեքային վարկ ունենալու դեպքում, եթե պահվել են սահմանված պայմանները, Ձեր վճարած եկամտային հարկի չափով կարող է նվազեցվել հիփոթեքային վարկի վճարվելիք տոկոսագումարները:

Մոդուլ 2 // Վարժություններ

Բյուջեի կազմում. որտեղից է գալիս Ձեր գումարը և ու՞ր է այն գնում:

Ցուցում. պատասխանե՛ք հետևյալ հարցերին, որպեսզի կարողանաք կազմել Ձեր սեփական բյուջեն:

1. Գրանցե՛ք Ձեր ամսական եկամտի աղբյուրները ստորև ներկայացված աղյուսակում: Այնուհետև դրանք ցանկագրե՛ք իրար տակ և վերջում դու՛րս բերե՛ք «Ընդամենը ամսական եկամուտ» տող:

Եկամտի աղբյուրներ	Ամսական գումար
Աշխատավարձ	դրամ
Նպաստ	դրամ
Նվերներ	դրամ
Այլ	դրամ
Ընդամենը ամսական եկամուտ	

2. Լրացրե՛ք ստորև ներկայացված հոդվածների համար ամսական պարբերականությամբ ծախսվող գումարները: Այնուհետև դրանք գումարե՛ք իրար և վերջում դու՛րս բերե՛ք «Ընդամենը ամսական ծախսեր» տող:

Ծախսեր	Գումարը՝ մեկ ամսվա համար
Կինո, երաժշտություն և ժամանց	դրամ
Հագուստ և պարագաներ	դրամ
Գրքեր և խաղեր	դրամ
Սնունդ	դրամ
Տրանսպորտ	դրամ
Գրենական պիտույքներ	դրամ
Բարեգործություն	դրամ
Հեռախոս	դրամ
Այլ	դրամ
Ընդամենը ամսական ծախսեր	

3. Ընդհանուր ամսական եկամուտներից հանե՛ք ընդհանուր ամսական ծախսերը: Դա Ձեր «Ընդամենը խնայողություն» տողն է: Գրանցե՛ք այն այստեղ:

Ընդամենը խնայողություն	
-------------------------------	--

4. Եթե Ձեր «Ընդամենը խնայողություն» տողը ցույց է տալիս 0 գումար կամ դրանից պակաս, ուրեմն ժամանակն է վերանայել, թե որքան եք վաստակում և որքան ծախսում: Ի՞նչ փոփոխություններ կրելի է անել, որպեսզի նվազեցնեք ծախսերը կամ ավելացնեք եկամուտը:

Մոդուլ 2 // Քննարկում

Հարցրե՞ք ուսանողներին, թե նրանց կարծիքով ինչ դեր է խաղում ֆինանսական նպատակադրումը բյուջեի կազմման գործում: Հնարավոր պատասխաններից են. նպատակները ա) կարող են օգնել որպեսզի անհատը սահմանի ֆինանսական առաջնահերթություններ, բ) կարող են շարժառիթ տալ՝ ավելի շատ գումար մի կողմ դնելու, այսինքն՝ խնայողության համար:

Ուսանողների կարծիքով ինչ դեր կարող է բարեգործական սվիրաբերումն ունենալ բյուջեի կազմման գործում: Նշել, որ շատ մարդիկ իրենց բյուջեից մի որոշակի մաս են առանձնացնում և այդ գումարները բարեգործական նպատակներով հատկացնում այն կազմակերպություններին, որոնց նկատմամբ իրենք ունեն վստահություն, ընդ որում՝ այդ բարեգործական սվիրատվությունները կարող են շատ երկրներում նաև հարկային օգուտներ բերել: Հարցրե՞ք ուսանողներին՝ արդյոք իրենք լսել են որևէ կոնկրետ բարեգործական ընկերության, հիմնադրամի մասին, և արդյոք կան նրանց մեջ այնպիսիք, ովքեր հետաքրքրված են բարեգործությամբ: Նշե՞ք, որ կան բազմաթիվ կայքեր, որտեղ նրանք կարող են ուսումնասիրել բարեգործական ընկերությունների, հիմնադրամների գործունեությունը և կատարած աշխատանքները, ինչպես նաև իմանալ ավելին նրանց մասին:

Որպես հանձնարարություն՝ որոշե՞ք, թե հետևյալ հոդվածները էական ծախսերի (անհրաժեշտություն), թե հայեցողական ծախսերի (ցանկություն) օրինակներ են: Որոշ դեպքերում քննարկե՞ք այն հանգամանքները, որոնք կարող են հայեցողական ծախսերը վերածել ոչ հայեցողական ծախսերի կամ ընդհակառակը:

Ամսագիր և գազավորված ըմպելիք [ցանկություն]

Այս ամսվա վարձավճարը [անհրաժեշտություն]

Ընթրիք ռեստորանում [ցանկություն]

Հեռախոսավճար [կարող է լինել անհրաժեշտություն կամ ցանկություն, քննարկե՞ք]

Դպրոցական գրքեր [անհրաժեշտություն]

Մոտոցիկլետի ապահովագրության վճար [անհրաժեշտություն]

Ավտոբուսի ամսական երթուղավճար [անհրաժեշտություն]

Ջեռուցման վճար [անհրաժեշտություն]

Ներբեռնվող երաժշտություն [ցանկություն]

Սառեցված պիցցա [ցանկություն]

Մեկ զույգ նոր մարզակոշիկ, եթե Ձեր հին մարզակոշիկն այլևս պիտանի չէ
[անհրաժեշտություն]

(Իսկ ինչ կասե՞ք այն մասին, որ Դուք արդեն ունեք հինգ զույգ պիտանի մարզակոշիկ)
[ցանկություն]

Մեքենայի շարժիչի յուղի փոխում [անհրաժեշտություն]

Նոր բջջային հեռախոս [ցանկություն]

(Իսկ եթե Ձեր հին բջջային հեռախոսը այլևս չի աշխատում) [անհրաժեշտություն]

Կանոնավոր մուտքագրումներ Ձեր ընթացիկ հաշվին [անհրաժեշտություն]

Մոդուլ 2 // Վիկտորինա

Պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

Ճիշտ թե սխալ. ոչ հայեցողական ծախսերը կարող են ներառել հաստատուն կամ փոփոխական ծախսեր:

Գնացքի ամսական երթուղավճարը հաստատու՞ն, թե՞ փոփոխական ծախսի օրինակ է:

Ճիշտ թե սխալ. բյուջեի հիմնական նպատակը ծախսելու տեմպը նվազեցնելն է:

Արդյո՞ք մթերային խանութը հայեցողական ծախսի օրինակ է:

Ձեր եկամտի առևձազն հր տոկոսն են մասնագետները խորհուրդ տալիս խնայել:

Ճիշտ թե սխալ. բյուջեն սովորաբար կարող է օգնել Ձեզ ծախսել պակաս և խնայել ավելին:

Ճիշտ թե սխալ. ազնվորեն գնահատելով Ձեր կարիքներն ընդդեմ Ձեր ցանկությունների՝ Դուք կարող եք վերահսկել չափից ավելի ծախսերը:

Ճիշտ թե սխալ. հաստատուն ծախսը նույն գումարային մեծությունն ունի յուրաքանչյուր ամիս:

Ճիշտ թե սխալ. հայեցողական ծախսը վատ բան է, և դրանից հարկ է խուսափել:

Ճիշտ թե սխալ. եթե Ձեր ամսական եկամուտը կազմում է 150 000 դրամ, ապա 15 000 դրամ խնայողությունը խելացի նպատակադրում կարող է լինել:

Ճիշտ թե սխալ. բարեգործական նվիրաբերումը, բացի ուրիշներին օգնելուց, կարող է նաև հարկային արտոնություններ ապահովել:

Մոդուլ 2 // Պատասխաններ

Վիկտորինայի պատասխաններ.

1. ճիշտ
2. Հաստատուն
3. Սխալ: Սա կարող է լինել բյուջեի արդյունքներից մեկը, սակայն դրա հիմնական նպատակն անձնական ֆինանսների խնդիրն ավելի լավ պատկերացնելն է և վերջիններիս նկատմամբ վերահսկողությունը:
4. Ոչ
5. 10 տոկոս
6. ճիշտ
7. ճիշտ
8. ճիշտ
9. Սխալ: Այն պետք է ուշադիր գնահատել ամեն ամիս, բայց լիովին դրանից հրաժարվելն անիրատեսական է: Հայեցողական ծախս կատարելը կարող է հետ պահել լավ խնայելու հնարավորությունից:
10. ճիշտ
11. ճիշտ

VISA

worldwide partner



Ֆինանսական
Ֆուտբոլ

Մոդուլ 3 // ԽՈՒՍԱՓԵՆՔ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՈՒՂԱԿՆԵՐԻՑ

Միջազգային մակարդակ: 18 տարեկան և բարձր

Մոդուլ 3 // «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼ» ԵՐԱԳԻՐ

Ֆինանսական ֆուտբոլը կրթական տեսախաղ է, որը նախատեսված է անձնական ֆինանսների հիմունքների մասին ավելի գիտելիքներ կուտակելու համար:

Այն մշակվել է այն տրամաբանությամբ, որ խաղերը կարող են լինել ուսուցման արդյունավետ գործիքներ: Ֆինանսական ֆուտբոլը աշակերտներին, ուսանողներին ներգրավում է զվարճալի, հաճելի զբաղմունքում՝ միաժամանակ տալով նրանց գիտելիքներ այնպիսի թեմաներով, որոնք էական են կյանքի կարևոր հմտություններ յուրացնելու համար:

Ֆինանսական ֆուտբոլը բարդության տարբեր մակարդակների հարցեր է առաջադրում ողջ խաղի ընթացքում: Հաջող ֆինանսական կառավարումը, ինչպես ֆուտբոլում, պահանջում է ռազմավարություն, հնարամտություն և տոկոսություն:

Հետևյալ ուսումնական ծրագիրը խաղին նախորդող մոդուլների շարք է: Նախքան Ֆինանսական ֆուտբոլ խաղալը, խորհուրդ ենք տալիս Ձեր աշակերտների, ուսանողների հետ ուսումնասիրել և լրացնել չորս կրթական մոդուլները, որպեսզի նրանք հաջող անցում կատարեն այն ֆինանսական հասկացություններին, որոնք ընդգրկվել են այս խաղում:

Մոդուլ 3 // ԽՈՒՍԱՓԵՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՈՒՂԱԿՆԵՐԻՑ

Համառոտ ակնարկ. այս դասին ուսանողները պատկերացում կկազմեն ֆինանսական երկու ամենամեծ ծուղակների մասին, որոնք կարող են ազդեցություն թողնել իրենց անձնական ֆինանսների վրա. խոսքը պարտքի բեռի տակ ընկնելու և անձնական տվյալները գողանալու մասին է: Նրանք կսովորեն, թե ինչպես, պահպանելով արդյունավետ ֆինանսական սովորություններ և ձեռնարկելով անվտանգության կանխարգելիչ միջոցառումներ, կարող են զերծ մնալ այս ռիսկերից: Նրանք նաև կուսումնասիրեն անձնական տվյալների գողության և պարտքի բեռի տակ լինելու կարճաժամկետ ու երկարաժամկետ հավանական ազդեցությունները, ինչպես նաև կծանոթանան այդպիսի իրավիճակները շտկելու եղանակներին, որոնցով հնարավոր լինի կրկին գտնել անձնական ֆինանսների լավ կառավարման ճանապարհը:

Տարիքային խումբ. 18 տարեկան և բարձր

Տրամադրվող ժամանակ. 60 րոպե

Առարկա. տնտեսագիտություն, մաթեմատիկա, ֆինանսներ, անձնական ֆինանսների կառավարում, կիրառական հմտություններ

Ուսուցման նպատակներ.

- բացահայտել սովորություններ, որոնք կարող են ավելացնել կամ նվազեցնել պարտքի բեռի տակ ընկնելու կամ անձնական տվյալների գողության ռիսկերը,
- հասկանալ, թե ինչպես է պարտքը կամ անձնական տվյալների գողությունը ազդում Ձեր վարկային և ֆինանսական առողջության վրա,
- սովորել պարտքին և անձնական տվյալների գողությանն առնչվող ընդհանուր եզրույթները,
- ուսումնասիրել այդ խնդիրների լուծման եղանակները,
- իմանալ պարտքի ետ ստացման ժամանակ սպառողների իրավունքները:

Նյութեր. ծրագիրը վարողները կարող են վիկտորինան և գրավոր վարժությունները որպես բաժանվող նյութ տալ և պատճենել այս փաստաթղթի հետևի մասում: Հաճախ կիրառվող ֆինանսական եզրույթների համար աշակերտները կարող են օգտվել համացանցից, օգտագործել առցանց բառարան կամ օգտվել համացանցից:

Գործնական վարժությունների պատասխանները այս փաստաթղթի վերջին էջում են:

Մոդուլ 3 // Ուղեցույց

Ֆուտբոլային խաղի ժամանակ ֆուտբոլիստները դաշտում որոշակի ռիսկերի են ենթարկվում, ինչպես հանդիպման ընթացքում վնասվածք կամ խաղի կանոնների խախտման դեպքում զգուշացում ստանալը: Իսկ ահա այնպիսի պարզ գործողությունները, ինչպես, օրինակ, նախքան դաշտ դուրս գալը մկանները տաքացնելը և խաղի կանոնների իմացությունը, անշուշտ, կարող են օգնել նվազեցնել այդ սցենարների հավանականությունը: Նմանապես, որոշակի գործողություններն ու բացթողումները կարող են բացասաբար անդրադառնալ Ձեր անձնական ֆինանսներին: Օրինակ՝ մի քանի վատ սովորույթներով, ինչպես ապրանքներ ապառիկով գնելը, եթե իրականում Ձեզ նման բան թույլ տալ չեք կարող, դրա հետ միասին անձնական բյուջեն չպլանավորելով և լավ չկառավարելով, Դուք հեշտությամբ կարող եք անցանկալի պարտքեր կուտակել: Նմանապես, պատշաճ ձևով չպահպանելով վճարային քարտի PIN գաղտնաբառը կամ էլեկտրոնային տիրույթում ընտրելով հեշտ կռահելի գաղտնաբառեր, ավելի խոցելի եք դառնում Ձեր միջոցների յուրացման և անձնական տվյալների գողության համար: Բարեբախտաբար, այդ երկու ծուղակներից էլ կարելի է հեշտությամբ խուսափել:

Բացատրեք, որ **գերպարտք ունենալը** վիճակ է, երբ Դուք պարտք եք ավելի շատ գումար, քան Ձեր ունեցած միջոցներն են կամ քան կարող եք Ձեզ թույլ տալ վերադարձնել: Գերպարտք կունենանք, եթե իմպուլսիվ ծախսեր կատարեք՝ առանց հաշվի առնելու, թե կարող եք Ձեզ նման բան թույլ տալ կամ Դուք իրականում դրա կարիքն ունեք, թե ոչ:

Սկսեք Ձեր քննարկումը պարտքի թեմայից՝ հարցնելով ուսանողներին, թե իրենց կարծիքով ինչ է պարտքի բեռը և ինչի արդյունքում է այն առաջանում: Ինչպես են մարդիկ պարտքի բեռի տակ ընկնում:

ՀԵՌՈՒ ՄԱՆԵ ՊԱՐՏԵԻ ԲԵՌԻՑ

Երբ պարտքով գումար ենք վերցնում ընկերոջից կամ ծանոթից՝ ամենավերջին էլեկտրոնային սարքը ձեռք բերելու համար, գումարը վերադարձնելու մտայնությունը այդ պահին մեզ այնքան էլ չի անհանգստացնում: Սակայն պարտքով վերցրած գումարը ողջամիտ ժամկետում վերադարձնելու կամ մարելու կարողությունը կարևոր հմտություն է, որ երիտասարդները պետք է յուրացնեն և գործածեն որպես ուսանողներ և ոչ միայն:

ԻՆՉԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ

Թեև վարկ վերցնելը կարող է վարկային պատմություն կառուցելու կարևոր միջոց լինել, սակայն այն կարող է նաև հանգեցնել անփույթ վարքագծի պատճառով գերպարտքի կուտակմանը: Անկառավարելի պարտքը չի կուտակվում մեկ գիշերում: Այն հետևանք է ժամանակի ընթացքում կայացրած ֆինանսական ոչ խելամիտ բազմաթիվ որոշումների ու ձեռք բերած սովորությունների: Ներկայացնում ենք դրական վարքագծի մի քանի դրսևորումներ, որոնք կարող եք ընդօրինակել: Դրանք Ձեզ կընծեռեն վարկային միջոցը Ձեր օգտին կիրառելու հնարավորություն՝ գերծ մնալով պարտք կուտակելու անցանկալի հեռանկարից:

Խուսափեք անհարկի գնումներից. Հիշեք, որ ցանկություններն ու կարիքները տարբեր են: Յուրաքանչյուր գնում կատարելուց առաջ հարցրեք ինքներդ Ձեզ՝

արդյո՞ք սա այն է, ինչի կարիքն իսկապես ունեմ, թե՞ դա պարզապես «ցանկություն է», կարո՞ղ եմ դա ինձ թույլ տալ, ինչպե՞ս եմ վճարելու դրա համար, այդ իրը ձեռք բերելը կարո՞ղ է ունենալ բացասական հետևանքներ:

Տնօրինեք Ձեր բյուջեն. Բյուջե կազմելն ու դրան հետևելը օգնում է, որպեսզի միշտ իմանաք, թե ծախսելու որքան գումար ունեք: Եթե ինչ-որ բան գնելու արդյունքում Ձեր բյուջեն դուրս է գալու հավասարակշռությունից, թերևս լավ կլինի, որ կրճատեք մեկ այլ գնում կամ հետաձգեք այդ գնումը, մինչև բավականաչափ գումար ինայած կլինեք այդ նպատակի համար: Եթե պարտքերը սկսում են աճել ձևագնդի պես, դրանց վերահսկումը բարդ ինտիդի է դառնում:

Մոդուլ 3 // Ուղեցույց (շարունակելի)

Ապրենք Ձեր միջոցների սահմաններում. Սա ենթադրում է անել այնպես, որ Ձեր եկամուտներն ավելին լինեն, քան ծախսերը: Եթե ապրում եք Ձեր միջոցների սահմաններից դուրս, բայց իրեր եք ձեռք բերում ապառաժիկ կարգով, որոնք անմիջապես չեք կարող մարել, ուրեմն ժամանակն է կրճատել ծախսերը կամ ավելացնել եկամուտը:

ՊԱՐՏՔԻ ՀԵՏԱԱՆՔՆԵՐԸ

Եթե լավ վարկային սովորությունը կարող է օգտակար լինել դրական վարկային պատմություն ունենալու համար, վատ վարկային սովորությունները կարող են հանգեցնել անկառավարելի պարտքի ձևավորմանը, որը կարող է բացասական տեղեկատվություն ավելացնել Ձեր վարկային պատմության մեջ և իջեցնել Ձեր վարկային սքորը: Չափից շատ պարտք կուտակելու (օրինակ՝ վճարումները չկատարելու կամ վարկային սահմանաչափերը գերազանցելու) հավանական բացասական հետևանքներից են չմարված պարտավորությունների կուտակումը, վարկի ավելի բարձր տոկոսագումարներ վճարելը, մեքենայի վարկի ավելի մեծ ամսական վճարներ կատարելը և նույնիսկ բնակարան ունենալու կամ աշխատանքի ընդունվելու հետ կապված դժվարություններ ունենալը:

ՄԵՆԱՑՆԵՆՔ ՊԱՐՏՔԸ

Եթե պարտքը սկսում է աճել ձեռքի պես, դեռ կան Ձեր ֆինանսները վերահսկելիության դաշտ վերադարձնելու տարբերակներ: Նախևառաջ, Դուք պետք է կրճատեք ավելորդ ծախսերը: Գրի առեք ամեն մի դրամը, որ ծախսում եք յուրաքանչյուր ամիս և մատնանշեք այն իրերն ու ապրանքները, առանց որոնց Դուք կարող եք ապրել:

Այնուհետև, կարևոր է պարզաբանել, թե որքան է Ձեր ընդհանուր պարտքը, և մշակել այն մարելու ծրագիր: Շատ փորձագետներ խորհուրդ են տալիս առաջին հերթին վճարել ամենաբարձր տոկոսադրույքով պարտքերը, միաժամանակ շարունակելով կատարել մնացած պարտավորությունների գծով նվազագույն վճարումները, ինչից հետո ձեռնարկել հաջորդ ամենաբարձր տոկոսադրույքն ունեցող պարտքի մարման գործընթացը:

Պարտքերի գծով կարող եք դիմել **ֆինանսական խորհրդատվության**: Նման մասնագետներն օգնում են իրատեսական քյուշե կազմել և պարտք վերցրած գումարը վերադարձնելու նպատակով ծրագիր մշակել:

Եթե որևէ մեկն այնքան է խրվում պարտքի մեջ, որ արդեն ի վիճակի չէ դուրս գալ դրա բեռի տակից առանց օգնության, նրա վերջին աստիճանի հնարավորությունը կարող է դառնալ սնանկության հայց ներկայացնելը: Թեպետ սնանկության վարույթը կարող է վերջ տալ պարտքին կամ նվազեցնել պարտքի գումարը, այն, այդուհանդերձ, սարսափելի վնաս է հասցնում Ձեր վարկային սքորին, երևում է Ձեր վարկային պատմության մեջ և կարող է դժվարացնել բնակարան ձեռք բերելը, նոր վարկային քարտերի հաշիվներ բացելը կամ, առհասարակ, որևէ տեսակի վարկ վերցնելը:

Իրավունքներ պարտքի ետստացման ժամանակ

Եթե Դուք այլևս ի վիճակի չեք մարել անկառավարելի պարտքը, հարկ է իմանալ, թե ինչ իրավունքներ ունեք պարտապանների ձեռնարկած գործողությունների դեպքում: Վարկատու կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանվում են պարտքերի ետստացման կոնկրետ ընթացակարգեր և արարողակարգեր:

Հետագայում վարկային պատմության և այլ հարցերում խնդիրները բացառելու համար կարող եք վարկի մարումից հետո պահանջել տեղեկանք՝ վարկն ամբողջությամբ մարված լինելու վերաբերյալ:

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Ինչպես վարկային պրոդուկտի հետ անխոհեմ վարմունքը կարող է հանգեցնել պարտքերի կուտակման,

Մոդուլ 3 // Ուղեցույց (չարունակելի)

այնպես էլ անձնական տեղեկությունները սխալ համատեքստում բացահայտելը կամ սխալ անձնավորության հետ կիսելը կարող է Ձեզ ավելի խոցելի դարձնել ինքնության գողության պարագայում: Ինքնության գողերը տարբեր մեթոդներ են օգտագործում անձնական տեղեկություններն ապօրինաբար յուրացնելու համար, անընդհատ կատարելագործում են դրանք և մշակում նոր եղանակներ: Նրանք տեղեկություններ են ձեռք բերում ամենատարբեր տեղերից ու հանգամանքներում, օրինակ՝ քչփողելով աղբ նետած Ձեր աշխատանքային թղթերը, որոնցից կարելի է կարևոր տեղեկություն վերցնել, Ձեր թիկունքի ետևից հայացք գցելով բանկոմատի ստեղնաշարին, երբ Դուք հավաքում եք գաղտնաբառը, մուտք գործելով Ձեր անձնական տեղեկությունների դաշտ ֆեյսբուքյան էջում և այլն:

Որոշ առավել տարածված խաբեությունների միջոցով չարագործներն անձնական տեղեկությունների դաշտ մուտք ունենալու համար օգտագործում են Ձեր համակարգիչը կամ սմարթֆոնը: Այդ խաբեություններից կարելի է առանձնացնել երկուսը՝ ա) ֆիշինգը, երբ որպես վստահելի կազմակերպություն (օրինակ՝ Ձեր բանկը) ներկայացող ինչ-որ սուբյեկտ էլեկտրոնային փոստով գրություն է ուղարկում և փորձում Ձեզնից կորզել անձնական կամ բանկային հաշվին վերաբերող տեղեկություններ կամ այդպիսի տեղեկությունների հաստատում, ինչի հիման վրա էլ հետագայում կարող են ստեղծվել նոր կեղծ հաշիվներ, և բ) վիշինգը. իրական կամ ավտոմատացված զանգով փորձում են Ձեզնից նույն տեսակի տեղեկատվություն ստանալ հեռախոսով:

ՊԱՅՊԱՆԵՔ ԶԵՉ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Չնայած նրան, որ խաբեության նորանոր ձևեր ի հայտ են գալիս օր օրի, գոյություն ունեն մեթոդներ, որոնց միջոցով կարելի է պաշտպանվել աշխատավայրում, տանը կամ առցանց:

- Չնայած նրան, որ խաբեության նորանոր ձևեր ի հայտ են գալիս օր օրի, գոյություն ունեն մեթոդներ, որոնց միջոցով կարելի է պաշտպանվել աշխատավայրում, տանը կամ առցանց:
- Եթե Ձեր կրեդիտային, դեբետային կամ հաշվարկային քարտը կորել կամ գողացվել է, այդ մասին անմիջապես տեղեկացրեք քարտը թողարկողին:
- Նախագգուշական նկատառումներից ելնելով՝ անվտանգ վայրում պահպանեք Ձեր վճարային բոլոր քարտերի հաշվեհամարների ցանկը, ինչպես նաև յուրաքանչյուր քարտը թողարկող հիմնարկի հեռախոսահամարները:
- Երբ պատրաստվում եք իրեր պատվիրել առցանց ռեժիմով, փնտրեք անվտանգ կայքեր, որոնք ունեն <https://> նշագրումն իրենց վեբ-հասցեում և օգտագործում են Secure Socket Layer (SSL) կոդավորումն ու վկայականները, ինչն էլ ապահովում է Ձեր գործարքների անվտանգությունը հաբերային խարդախություններից:
- Պահպանեք Ձեր հաշվեհամարները: Մի տվեք Ձեր հաշվեհամարն այս ու այն կողմ՝ Ձեզ զանգահարողին կամ էլեկտրոնային փոստով նամակ ուղարկողին: Դրանք տրամադրեք միայն այն ընկերություններին, որոնց հետ Դուք ինքներդ եք գործ ունենում: Նույնը վերաբերում է Հանրային ծառայությունների Ձեր համարանիշին և մյուս անձնական տեղեկություններին:
- Մանրատելով (shred) ոչնչացրեք բոլոր այն փաստաթղթերն ու անդորրագրերը, որոնցում Ձեր քարտի համարը կարող է արտացոլված լինել:
- Երբեք մի ուղարկեք Ձեր քարտի համարը կամ այլ անձնական տեղեկություններ էլեկտրոնային փոստի միջոցով, քանի որ դա, որպես կանոն, ապահով գործընթաց չէ:
- Պաշտպանեք Ձեր վճարային քարտերի PIN գաղտնաբառը կամ անհատական նույնականացման համարը: Գաղտնաբառեր ընտրելիս էլ ընտրեք թվանշանների այնպիսի պատահական համակցություն, որը Դուք կարող եք հիշել, սակայն որը կապված չէ անձնական

Մոդուլ 3 // Ուղեցույց (շարունակելի)

տեղեկությունների, օրինակ՝ Ձեր ծննդյան ամսաթվի կամ բնակության հասցեի հետ:
Երբեք մի գրեք Ձեր PIN-ը քարտի ետնամասում կամ մի պահեք նման գրառում Ձեր դրամապանակում:

- Ստուգե՛ք Ձեր հաշվի քաղվածքներն ամեն ամիս, իսկ վարկային զեկույցները՝ առնվազն տարին մեկ անգամ: Նման ստուգումները պետք են որևէ խարդախություն բացառելու համար:

ԻՆՉՊԵՍ ԼՈՒԾԵԼ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐԸ

Ինքնության գողությունը կարող է աներևակայելի բացասական ազդեցություն ունենալ Ձեր ֆինանսների վրա: Եթե կարծում եք, որ Ձեր անունով կարող է ինչ-որ հաշիվ օգտագործված լինել կամ Ձեր ինքնությունը կարող է գողացված լինել, այստեղ արագ գործելը և համապատասխան կազմակերպություններին տեղեկացնելը կարևոր է:

• Զայլ 1 – Ծանուցե՛ք հաշվի թողարկողներին.

Տեղեկացրե՛ք բանկին, վարկային կազմակերպությանը կամ հաշվի այլ թողարկողներին այն մասին, որ, Ձեր կարծիքով, Ձեր անվամբ օգտագործվել է Ձեր հաշիվը, և խնդրե՛ք նրանց փակել այդ հաշիվը և բացել նորը՝ մեկ այլ հաշվեհամարով: Նաև փոխե՛ք գողության ենթարկված հաշիվների հետ կապված գաղտնաբառերը:

• Զայլ 2 – Կապվե՛ք վարկային բյուրո, մեր երկրում՝ ԱԶՌԱ վարկային բյուրո

Ինքնության գողերը կարող են, մեծ ջանքեր ներդնելով, Ձեր անունից հաշիվներ բացել, վարկեր վերցնել: Սա բացառելու համար կարող եք Կարկային բյուրոյից պահանջել զեկույց՝ պարզելու, թե որտեղից է կատարվել Ձեր վերաբերյալ հարցում:

Վերցրե՛ք Ձեր վարկային զեկույցը, ուշադիր ուսումնասիրե՛ք այն՝ սխալները, կեղծ գործունեությունը կամ անծանոթ աղբյուրներից վարկային հարցումները բացառելու համար:

Մոդուլ 3 // Զննարկում

Վարկ. բացահայտենք պարտքային լավ ու վատ քայլերը

Հուշում. ուսումնասիրեք ստորև ներկայացված վարկային սցենարները և մատնանշեք այն դրական ու բացասական ազդեցությունները, որ յուրաքանչյուր որոշում կարող է ունենալ Ձեր անձնական ֆինանսների ապագայի վրա:

Սցենար 1

Արմանը վերջերս է տեղափոխվել իր առաջին բնակարան և ցանկանում է հյուրասենյակի համար գնել հարթ էկրանով հեռուստացույց: Նա աշխատում է, բայց քոլեջի ուսման վարձի, գրքերի ու վարձակալության հետ կապված ծախսերի պատճառով նրա միջոցները գնալով ավելի սուղ են դառնում: Արմանը որոշում է օգտվել տեղի էլեկտրոնիկայի խանութի ֆինանսավորման առաջարկից և իր հավանած հեռուստացույցը գնում է վարկային գծի միջոցով: **Ինչ եք կարծում, սա պարտքային լավ, թե՞ վատ քայլ է: Ինչու՞:**

Պատասխան. Նոր հեռուստացույց ունենալու Արմանի ձգտումը ցանկություն է և, հետևաբար, ոչ այնքան հաջող գնում, մասնավոր, եթե դրա համար օգտագործվել է վարկային գիծ: Հաշվի առնենք, որ նրան գումարն ավելի շատ հարկավոր է վարձակալության, ուսման վարձի և գրքերի համար: Եթե Արմանն ի վիճակի չլիներ մարել վարկը, ապա դա կարող է բացասաբար անդրադառնալ նրա վարկային պատմության վրա:

Սցենար 2

Վարդանը նոր է ավարտել քոլեջը և մարքեթինգային ընկերությունում աշխատանքի է անցել որպես գրաֆիկական դիզայներ: Նա ցանկանում է գնել 15 000 000 դրամ արժողությամբ բնակարան, որը մոտ է իր նոր աշխատանքի վայրին: Նա խնայել է այնքան գումար, որը բավարար է գումարի 20% կանխավճարը կատարելու համար: Վարդանը մտադրվել է 12 000 000 դրամի վարկ կամ հիփոթեկային վարկ վերցնել՝ նշված բնակարանը ձեռք բերելու համար: **Ինչ եք կարծում, սա պարտքային լավ, թե՞ վատ քայլ է: Ինչու՞:**

Պատասխան. Վարդանը կայուն աշխատանք ունի և կանխավճար կատարելու համար պատկառելի գումար, միևնույն ժամանակ բնակարան ձեռք բերելը լավ ներդրում է նրա համար: Բնակարանային վարկը Վարդանին հնարավորություն կտա շարունակել կառուցել իր վարկային պատմությունը:

Սցենար 3

Նորան լսել է, որ բազմաթիվ վարկային քարտային գծեր ունենալը վարկային պատմությունը ձևավորելու լավ միջոց է: Նա ներկայումս ունի հինգ վարկային քարտային գիծ, բայց երբեմն մոռանում է ժամանակին կատարել իր վճարումները և սովորաբար յուրաքանչյուր քարտի վրա ունի մնացորդ: Նրա սիրած խանութն առաջարկում է 20 000 դրամանոց նվեր քարտ իր հաջորդ գնումը կատարելու համար՝ խոստանալով, որ ապագայում ևս նվերներ կտրամադրի, եթե Նորան վարկային քարտային գիծ բացի: Նա որոշում է ունենալ այդ խանութի հետ համագործակցության աղյուսքում առաջարկված նոր վարկային քարտային գիծը՝ զեղչերից օգտվելու համար: **Ինչ եք կարծում, սա պարտքային լավ, թե՞ վատ քայլ է: Ինչու՞:**

Պատասխան. Զանի որ Նորան արդեն հինգ վարկային քարտային գիծ ունի և երբեմն ուշացումով է վճարում իր հաշիվները, մեկ այլ վարկ վերցնելը կարող է հավանական վնաս հասցնել նրա վարկային սքորին, եթե Նորան շարունակի ուշացումներով կատարել իր վճարումները:

Մոդուլ 3 // Վիկտորինա

Պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

Ե՞նչ է սխալ. ֆիզիկա և վիզիուալ ինքնության գողության տարածված ձևեր են:

Ե՞նչ է սխալ. Ձեր բանկային հաշվի տեղեկությունների և PIN գաղտնաբառի մասին դպրոցում ընկերոջ հետ կիսվելը ռիսկային քայլ չէ:

Ի՞նչ սովորությունն գիտեք, որը Ձեզ կարող է պարտքի բեռի տակ ընկնելու մեծ ռիսկի հասցնել:

Թվարկե՛ք երեք բան, որ մարդիկ կարող են անել ինքնության գողության հանգամանքի զոհ դառնալու ռիսկը նվազեցնելու համար:

Ե՞նչ է սխալ. Դուք պարտադիր չէ, որ վճարային քարտ ունենաք՝ ինքնության գողության հանգամանքի զոհ դառնալու համար:

Եթե Ձեր բանկն էլեկտրոնային նամակ է ուղարկում Ձեզ՝ պահանջելով պատասխանել անձնական տեղեկություններ ներառող հարցերի, արդյո՞ք նման գործողությունն ապահով է:

Ե՞նչ է սխալ. հաշիվների քաղվածքները վերստուգելը ինքնության գողությունից պաշտպանվելու եղանակներից է:

Ե՞նչ է սխալ. վարկային քարտի միջոցով արձակուրդ վերցնելը, որի դիմաց Դուք չեք կարողանալու վճարել մոտակա ժամանակներս, «պարտքային վատ քայլի» օրինակ է:

Ե՞նչ է սխալ. լավագույն գաղտնաբառն այն է, որը երբեք չեք մոռանա, օրինակ՝ Ձեր հասցեն, ծննդյան օրը կամ Ձեր ընտանի կենդանու անունը:

_____ այն է, ինչ կարող է տեղի ունենալ, երբ Դուք վարկ օգտագործեք Ձեր միջոցներից ու հնարավորություններից դուրս ծախսեր անելու համար:

Մոդուլ 3 // ԳՐԱՎՈՐ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Օգտագործելով ինքնության գողության վտանգների մասին ստացած գիտելիքները՝ գրեք մի իրատեսական սցենար, ըստ որի Դուք կարծում եք, որ Ձեր վարկային քարտի հաշիվներից մեկը յուրացվել և շահագործվում է: Մտքում գծագրեք այն քայլերը, որ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան մարմիններին (օրինակ՝ քարտ թողարկողին և վարկային բյուրոյին) դիմելու համար, ինչպես նաև այն գործողությունները, որոնք Դուք պետք է ձեռնարկեք, եթե կասկածում եք, որ Ձեր անձնական տվյալները կարող են գողացված լինել:

Սցենար. _____

Քայլ 1. Ձեր հաշիվը յուրացվել և շահագործվում է: Ի՞նչ պետք է անել առաջին հերթին՝ ինքներդ Ձեզ և Ձեր ֆինանսները պաշտպանելու համար:

Քայլ 2. Ի՞նչ պետք է անել հաջորդ քայլով՝ հավաստիանալու համար, որ Ձեր հաշիվները չեն վտանգվել:

Քայլ 3. Եթե Դուք որոշել եք, որ ինչ-որ մեկը, իսկապես, գողացել է Ձեր հաշվից կամ Դուք այսպես թե այնպես դարձել եք ինքնության գողության հանգամանքի զոհ, ի՞նչ է պետք անել հաջորդ քայլով:

Քայլ 4. Ի՞նչ պետք է անեք, որպեսզի ի վիճակի լինեք շարունակաբար վերահսկել Ձեր վարկը:

Մոդուլ 3 // Պատասխաններ

Վիկտորինայի պատասխաններ.

1. Ճիշտ
2. Սխալ
3. Հետևյալներից ցանկացածը՝ ծախսել Ձեր միջոցներից ու հնարավորություններից դուրս, չկազմել անձնական, վարկային քարտերի գծով նվազագույն վճարումներ կատարելը և մայր գումարը շուտ մարել չփորձելը, վարկն անխոհեմաբար օգտագործելը
4. Պարբերաբար ստուգել հաշիվների քաղվածքները կամ վարկային զեկույցը, խուսափել անձնական տեղեկություններ տրամադրելուց, ինսամբով ընտրել գաղտնաբառերը և պաշտպանել դրանք
5. Ճիշտ
6. Ոչ
7. Ճիշտ
8. Ճիշտ
9. Սխալ
10. Պարտք

Գրավոր վարժության պատասխաններ.

1. Դիմե՛ք Ձեր քարտը թողարկողին և վերջինիս խնդրե՛ք փակել այդ հաշիվը և բացել նորը՝ մեկ այլ հաշվեհամարով: Փոխե՛ք նաև ցանկացած այլ հարակից գաղտնաբառեր կամ PIN համարներ:
2. Վերցրե՛ք Ձեր Վարկային զեկույցը վարկային քյուրոյից (տարեկան մեկ անգամ կտրվածքով այն Ձեզ կտրամադրվի անվճար) և ուսումնասիրե՛ք դրանք՝ Ձեր պարտավորությունների մասին վարկային քյուրո փոխանցված տվյալների ամբողջականությունը և արժանահավատությունը ստուգելու նպատակով:
3. Դիմե՛ք ֆինանսական կառույցին, ոստիկանություն, կարող եք դիմել նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ:
4. Ամեն տարի վերցրե՛ք Ձեր վարկային զեկույցն ու ուսումնասիրե՛ք այն:



Ֆինանսական Ֆուտբոլ

Մոդուլ 4 // ՈՐՔԱՆ Է ՁԵՐ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
Միջազգային մակարդակ: 18 տարեկան և բարձր

Մոդուլ 4 // «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼ» ԵՐԱԳԻՐ

Ֆինանսական ֆուտբոլը կրթական տեսախաղ է, որը նախատեսված է անձնական ֆինանսների հիմունքների մասին ավելի գիտելիքներ կուտակելու համար:

Այն մշակվել է այն տրամաբանությամբ, որ խաղերը կարող են լինել ուսուցման արդյունավետ գործիքներ: Ֆինանսական ֆուտբոլը աշակերտներին, ուսանողներին ներգրավում է զվարճալի, հաճելի զբաղմունքում՝ միաժամանակ տալով նրանց գիտելիքներ այնպիսի թեմաներով, որոնք էական են կյանքի կարևոր հմտություններ յուրացնելու համար:

Ֆինանսական ֆուտբոլը բարդության տարբեր մակարդակների հարցեր է առաջադրում ողջ խաղի ընթացքում: Հաջող ֆինանսական կառավարումը, ինչպես ֆուտբոլում, պահանջում է ռազմավարություն, հնարամտություն և տոկոսություն:

Հետևյալ ուսումնական ծրագիրը խաղին նախորդող մոդուլների շարք է: Նախքան Ֆինանսական ֆուտբոլ խաղալը, խորհուրդ ենք տալիս Ձեր աշակերտների, ուսանողների հետ ուսումնասիրել և լրացնել չորս կրթական մոդուլները, որպեսզի նրանք հաջող անցում կատարեն այն ֆինանսական հասկացություններին, որոնք ընդգրկվել են այս խաղում:

Մոդուլ 4 // ՈՐՔԱ՞Ն Է ՁԵՐ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համառոտ ակնարկ. այս դասին ուսանողները պատկերացում կկազմեն այն մասին, թե ինչ է վարկը, ինչպես է ձևավորվում և պահպանվում անձնական վարկունակությունը, և թե ինչպես է վարկը համարվում ապահովված: Այս դասը նախատեսում է նաև ռազմավարություններ, որոնք կօգնեն Ձեզ հասկանալ վարկային պատմությունը և այն բարելավելու միջոցները՝ ավելի բարձր ֆինանսական հեռանկար կառուցելու համար:

Տարիքային խումբ. 18 տարեկան և բարձր

Տրամադրվող ժամանակ. 60 րոպե

Առարկա. տնտեսագիտություն, մաթեմատիկա, ֆինանսներ, անձնական ֆինանսների կառավարում, կյանքի հմտություններ

Ուսուցման նպատակներ.

- հասկանալ վարկունակության իմաստը,
- իմանալ վարկի երեք C-երը,
- որոշել՝ երբ կարելի է և երբ չի կարելի օգտվել վարկից,
- հասկանալ վարկի գնահատականների և վարկային զեկույցների նպատակը,
- հասկանալ վարկունակության դերը՝ ավտովարկ ստանալիս:

Նյութեր. ծրագիրը վարողները կարող են վիկտորիան և գրավոր վարժությունները որպես բաժանվող նյութ տպել և պատճենել այս փաստաթղթի հետևի մասում: Հաճախ կիրառվող ֆինանսական եզրույթների համար աշակերտները կարող են օգտվել համացանցից, օգտագործել առցանց բառարան կամ օգտվել համացանցից:

Գործնական վարժությունների պատասխանները այս փաստաթղթի վերջին էջում են:

Մոդուլ 4 // Ուղեցույց

Ֆուտբոլում, ինչպես և այլ մարզաձևերում, վիճակագրությունն օգտագործում են ֆուտբոլիստների անհատական կատարողականը գնահատելու, ինչպես նաև թիմի տեղը լիգայի մրցաշարային աղյուսակում որոշելու համար: Ինչպես խաղացողին բնութագրում է բարձր մակարդակով անցկացրած խաղերի քանակը, այդպես էլ թիմին բնութագրում է մրցաշարային աղյուսակում իր դիրքը:

Ձեր վարկային պատմության սկիզբը դրվում է այն պահից, երբ Դուք վարկ եք ստանում՝ անկախ նրանից, թե ինչ տեսակի վարկային պրոդուկտներ են դրանք՝ վարկային քարտեր, ուսանողական վարկեր, վարկային գծեր: Ձեր վարկային պատմությունը որոշ առումներով նման է մարզիկի ֆուտբոլային վիճակագրությանը: Ուսումնասիրելով Ձեր վարկային զեկույցը, որտեղ գետեղված է Ձեր՝ վերջին 5 տարիների վարկային պատմությունը՝ վարկատուն կարող է չափել և գնահատել, թե որքան է հավանականությունը, որ Դուք կկարողանաք վերադարձնել վարկի գումարը, պարտքը: Մեր երկրում վարկային պատմությունը հավաքագրում է, վերջինիս հիման վրա վարկային զեկույց է տրամադրում ԱՔՌՎ վարկային բյուրոն: Ինչպես Ձեր վարկային զեկույցը, այնպես էլ վարկային սքորը, որոնց հիմքում Ձեր անցած ֆինանսական պարտավորվածություններն են, պատկերացում են տալիս այն մասին, թե որքան ռիսկային եք Դուք՝ վարկերի տրամադրման տեսանկյունից:

Վարկունակությանը վնաս հասցնող սխալներից խուսափելը հույժ կարևոր ունակություն է, քանզի վարկային պատմության մեջ արտացոլվում են հարցման պահին նախորդող 5 տարիների վարկային տվյալները:

Վարկունակ լինելու առավելությունները.

Բարձր վարկունակությունը մեծացնում է վարկ ստանալու կամ ավելի լավ պայմաններով վարկ ստանալու հավանականությունը: Եթե Դուք պատշաճ կերպով կատարել եք Ձեր պարտավորությունները, ունեք համապատասխան միջոցներ, կարգավիճակ, ապա հեշտությամբ և արագ կարող եք հավակնել առավել բարենպաստ պայմաններով վարկավորման: Դա կարող է արտահայտվել վարկի ավելի ցածր տոկոսադրույքով, մարման երկար ժամկետով կամ պարզեցված փաստաթղթաշրջանառությամբ:

Վարկունակ չլինելու անհարմարությունները.

Բացասական տվյալներ պարունակող վարկային պատմությունը կարող է հետագայում խոչընդոտ լինել ֆինանսական ծառայություններից օգտվելիս: Այն կարող է հիմք լինել նոր ստացվող վարկերի պայմանների խստացման կամ ընդհանրապես չտրամադրման համար:

Ի դեպ, եթե Դուք տրամադրել եք երաշխավորություն այլ անձին տրամադրվող վարկի համար, ապա հաշվի առեք այն հանգամանքը, որ այդ վարկի վերաբերյալ տեղեկությունները (այդ թվում մարումների վերաբերյալ) արտացոլվում են Ձեր վարկային պատմության մեջ:

Մոդուլ 4 // Զննարկում

Ստեղծենք, պահպանենք և ապահովենք մեր վարկը

Երբ վարկատուները քննարկում են վարկ կամ վարկային-քարտային գիծ ստանալու Ձեր հայտը, նրանք հիմնական մտահոգությունը մեկն է՝ արդյո՞ք պատշաճ կերպով կկատարեք Ձեր վճարումները և կմարեք վարկային պարտավորությունը: Այլ կերպ ասած՝ Դուք վարկունակ եք: Վարկատուներն իրենց այս կարևոր որոշումը կայացնելիս օգտագործում են մի շարք գործիքներ և դիտարկում բազմազան գործոններ:

Վարկի երեք C-երը հաշվի են առնվում՝ Ձեր վարկունակությունը որոշելու համար

Տալ հավանություն Ձեր՝ ավտովարկ կամ ուսանողական վարկ ստանալու հայտին: Արդյո՞ք Դուք հարմար թեկնածու եք աշխատանքի համար: Որոշում կայացնողները գնահատման գործընթացում քննարկում և դիտարկում են հետևյալ երեք տարրերը.

- բնավորություն (Character)՝ ինչպես եք կատարում ֆինանսական պարտավորությունները,
- կապիտալ (Capital)՝ ինչ միջոցներ ունեք, այդ թվում՝ անշարժ գույք, խնայողություններ և ներդրումներ,
- կարողություն (Capacity)՝ որքան պարտք եք ի վիճակի կառավարել՝ ելնելով Ձեր եկամտի մակարդակից:

Բնավորություն

Բնավորությունը գնահատական է տալիս նրան, թե ինչ հավանականությամբ կմարեք Ձեր պարտքերը: Պոտենցիալ վարկատուներն ուսումնասիրում են Ձեր անցած պատմությունը, ինչպես նաև կատարում հետևյալ հարցադրումները.

- Նախկինում վարկ օգտագործել եք,
- Ձեր վճարումները կատարում եք ժամանակին,
- Երբևիցե հայտարարվել եք սևանկ,
- Կարող եք տրամադրել երաշխավորագրեր,
- որքան ժամանակ եք ապրում Ձեր ներկա հասցեում,
- որքան ժամանակ է, որ Ձեր ներկա աշխատանքին եք:

Կապիտալ

Վարկատուները հաճախ են ցանկանում իմանալ, թե արդյո՞ք ունեք այնպիսի ակտիվներ, որոնք կարող են օգտագործվել որպես վարկի ապահովման միջոց, եթե կորցնեք աշխատանքը կամ ուշացնեք վարկի վճարումը:

- Ի՞նչ գույք ունեք, որը կարող է օգտագործվել որպես վարկի ապահովում:
- Ունե՞ք արդյո՞ք խնայողական հաշիվ:
- Ունե՞ք արդյո՞ք ներդրումներ, ինչը կարող է օգտագործվել որպես գրավ:

Կարողություն

Կարողությունը գնահատական է տալիս նրան, թե որքան պարտք կարող եք ունենալ, կառավարել՝ ելնելով Ձեր ֆինանսական վիճակից: Վարկատուներն ուզում են իմանալ՝ արդյո՞ք Դուք ունեք կանոնավոր աշխատանք, որը Ձեզ բավարար եկամուտ է ապահովում՝ Ձեր վարկի հետ կապված ծախսերը հոգալու համար:

- Ունե՞ք արդյո՞ք կանոնավոր աշխատանք կամ կայուն եկամուտ:
- Որքան եք վաստակում:

Մոդուլ 4 // Զննարկում (շարունակելի)

- Այլ վարկային վճարումներ կատարում եք: Եթե այո, քանիսն են դրանք:
- Ապրուստի ինչ ընթացիկ ծախսեր եք կատարում:
- Դեռ ընթացիկ պարտքեր ունեք:
- Զանձի հոգի կա Ձեր խնամակալության ներքո:

Վարկային գնահատականներ և զեկույցներ

Ձեր վարկային պատմության վերաբերյալ մանրամասներն ամփոփվում են Ձեր վարկային զեկույցում, և վարկատուները կամ դրա կարիքն ունեցողները կարող են ուսումնասիրել այն համապատասխանաբար՝ վարկ կամ վարկային քարտ տրամադրելիս, ինչպես նաև այլ դեպքերում (օրենքով սահմանված դեպքում Ձեր համաձայնությունը ստանալուց հետո): Դուք կարող եք տարին մեկ անգամ անվճար ստանալ մեկ վարկային զեկույց: Լավ կլինի պարբերաբար ստուգել վարկային զեկույցը, որպեսզի հավաստիանաք, որ այն չի պարունակում ոչ ճշգրիտ տեղեկատվություն կամ խարդախ գործարքներ, որոնք կարող են բացասաբար ազդել Ձեր վարկային պատմության վրա:

Ձեր վարկային սքորը թիվ կամ միավոր է, որը վարկատուներին օգնում է հասկանալ Ձեզ վարկ տրամադրելու ռիսկայնությունը: Հայաստանում կիրառվում է ԱՔՌԱ Սքորը, որը գործում է 400-ից մինչև 850 միջակայքում: Որքան բարձր է Ձեր սքորը, այնքան բարվոք է Ձեր վարկունակությունը: Եթե Ձեր գնահատականը ցածր է, ուրեմն հարկ է վարկունակության աստիճանը բարձրացնել՝ վճարումները ժամանակին կատարելով: Ժամանակի ընթացքում այստեսակ սովորությունը կօգնեն Ձեզ բարելավել Ձեր վարկային սքորը:

ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐ**Վճարեք պարտքերը**

Յուրաքանչյուր ամիս մարեք Ձեր վարկային քարտի մնացորդներն ամբողջությամբ: Աշխատեք կատարել Ձեր վճարումներն առանց անգամ մեկ օր ուշացման: Պարտատերերը նայում են Ձեր վարկի մնացորդի ու վարկային սահմանաչափի միջև առկա բացվածքը: Վարկային քարտերը խոհեմաբար օգտագործվելու դեպքում նպաստում են Ձեր վարկունակությանը:

Ծախսեք ավելի քիչ, քան վաստակում եք

Սեփական միջոցների ու հնարավորությունների սահմաններում ապրելը թույլ է տալիս Ձեզ խնայել ավելին, և խնայած գումարի առկայությունը նպաստում է վերը նշված բոլոր երեք C տարրերի բարելավմանը:

Պահպանեք հին հաշիվները

Վարկատուները հաճախ են ուշադրություն դարձնում Ձեր վարկային պատմության երկարությանը: Չրոյական մնացորդով հին վարկային քարտային հաշիվներ պահելը նպաստում է Ձեր վարկային պատմությանը՝ երկու ուղղությամբ: Առաջին հերթին, դրանք արտացոլում են վարկային պատմության երկարությունը: Եվ երկրորդ, երբ փակում եք հաշիվը, դրանով իջեցնում եք Ձեզ հասանելի վարկի ընդհանուր գումարը, որն էլ իր հերթին բարձրացնում է Ձեր մյուս վարկերի ու վարկային քարտերում առկա մնացորդների հարաբերակցությունը:

Կատարեք Ձեր վճարումները ժամանակին

Հիշեք, որ մեկ օր ուշացումն անգամ կարող է ազդել Ձեր վարկային պատմության վրա: Եթե չեք կարողանում Ձեր վճարումները կատարել ժամանակին, նախքան ուշ վճարում կատարելը գանգահարեք վճարումն ընդունող ընկերություններից յուրաքանչյուրին և բացատրեք իրավիճակը: Որոշ դեպքերում կարելի է ձեռք բերել փոխադարձ համաձայնություն, որը Ձեզ թույլ կտա վճարել այնքան, որքան ի վիճակի կլինեք տվյալ պահին: Եվ, քանի որ Ձեր գործողություններում ի հայտ է գալիս պատասխանատու վերաբերմունք և պատշաճ հոգածություն տվյալ խնդրի նկատմամբ, Դուք, ամենայն

Մոդուլ 4 // Զննարկում (շարունակելի)

հավանականությամբ, չեք վնասի Ձեր վարկունակությունը, քանի որ այն կտուժի ոչ ավելի, քան ուշացած կամ բաց թողնված վճարման պարագայում:

Խուսափեք սնանկությունից

Սնանկությունն իրավական վիճակ է, որը տրվում է դատական կարգով, երբ հայտարարվում է, որ Դուք ի վիճակի չեք կամ այլևս անկարող եք ետ վճարել պարտքերը Ձեր պարտատերերին: Սնանկությունը վերջին ատյանն է: Շատ դեպքերում սնանկանալուց կարելի է խուսափել:

Վարկունակությունը և ավտովարկերը

Ավտոմեքենա գնելիս՝ վարկունակությունը հաճախ կարևոր դերակատարում է ունենում: Չհաշված այն դեպքը, երբ ի վիճակի եք մեքենայի համար վճարել ամբողջ գինը միանգամից, մնացած դեպքերում Դուք, ամենայն հավանականությամբ, պետք է վերցնեք ավտովարկ: Ճիշտ է, վարկային միջոցները կիոզան մեքենայի հետ կապված ծախսերը, բայց Դուք ստիպված եք լինելու մարել վարկը ժամանակի ընթացքում:

Մեքենա ձեռք բերելու ճանապարհին՝ առաջին քայլերից մեկով պետք է որոշել, թե որքան կարող եք Ձեզ թույլ տալ վճարել յուրաքանչյուր ամիս, եթե հաշվի առնենք բուն մեքենայի, ավտոապահովագրության, սպասարկման և վառելիքի հետ կապված ծախսերը: Երբ մեքենայի ամսական քյուլջեն արդեն ձևավորված է, հաջորդ քայլով պետք է որոշել կանխավճարի հարցը: Սա այն գումարն է, որը Դուք վճարելու եք նախօրոք: Որքան մեծ լինի կանխավճարը, այնքան պակաս կլինի Ձեր ավտովարկի դիմաց հաշվարկվող տոկոսագումարները և, ըստ այդմ, կունենաք ավելի փոքր պարտավորվածություն:

Ամսական քյուլջեն և կանխավճարի մեծությունը որոշելուց հետո Դուք կարող եք սկսել համեմատել ավտովարկային պրոդուկտները և փնտրել-գտնել Ձեզ համար լավագույն տարբերակը:

Վարկատեսակները համեմատելիս, լավագույն պայմաններով գործարք կնքելու համար ուշադրություն դարձրեք հետևյալ գործոններին՝ վարկի ժամկետ, ամսական վճարման ենթակա գումարների մեծություն և տոկոսադրույք: Որքան բարձր է Ձեր վարկային սքորը, այնքան հավանական է ավելի հարմար պայմաններով վարկ ստանալու տարբերակը: Ընդհանրապես, որքան կարճ է վարկի ժամկետը, ավելի քիչ տոկոսագումարներ կվճարեք վարկի գործողության ողջ ժամկետում: Սակայն, իհարկե, այս դեպքում Ձեր ամսական վճարը ավելի բարձր է լինելու:

Մոդուլ 4 // Վիկտորինա

Պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

Ճիշտ թե սխալ. վարկային հին հաշիվները գործող վիճակում պահելը, նույնիսկ եթե դրանք գրոյական մնացորդ ունեն, կարող են դրականորեն նպաստել Ձեր վարկային պատմությանը:

Ճիշտ թե սխալ. վարկային քարտի վրա մեծ ծավալով պարտք ունենալն օգնում է Ձեր վարկունակությանը:

Ճիշտ թե սխալ. վարկատուներին զանգահարելը, երբ Դուք չեք կարողանում կատարել տվյալ վճարումը, լավ քայլ է Ձեր վարկունակությունը պահպանելու ճանապարհին:

Ճիշտ թե սխալ. տունը համարվում է կապիտալ:

Ճիշտ թե սխալ. եթե Ձեր վարկունակությունը ցածր մակարդակում է, Ձեր վարկային քարտի տոկոսադրույքը նույնպես փոքր կլինի:

Ճիշտ թե սխալ. մնանկությունը պարտքերը կառավարելու լավագույն եղանակն է:

ԱԲՌԱ Սթորի միավորները գործում են _____-ից մինչև _____ միջակայքում:

Ճիշտ թե սխալ. Ձեր սթոր գնահատականը և վարկային զեկույցը կարող է օգտագործվել պարտատերերի կողմից՝ Ձեր վարկունակությունը որոշելու համար:

Ճիշտ թե սխալ. պարտք հավաքագրողներին գործարար վարվելակերպն արգելում է զանգահարել Ձեզ կամ այլ կերպ կապվել Ձեզ հետ առավոտյան 8:00-ից մինչև երեկոյան 9:00-ն ընկած ժամանակահատվածից դուրս:

Մեքենայի վարկ ստանալիս կարևոր է նկատի առնել հետևյալ գործոնները՝ _____, _____ և _____:

Մոդուլ 4 // Գրավոր վարժություն

Բնավորությունը, կապիտալը և կարողությունը վարկի երեք C-երն են, որոնց վարկատուներն օգտագործում են հաճախորդի վարկունակությունը գնահատելու համար:

Բնավորությունը ցույց է տալիս, թե ինչպես էք կառավարել Ձեր գումարներն անցյալում: Դուք ժամանակին էք կատարել Ձեր վճարումները: Դուք ունեցել էք վարկային քարտ: Դուք երբևէ սնանկության հայց ներկայացրել էք: Որքան ժամանակ էք բնակվել Ձեր տանը և աշխատել ներկայիս աշխատավայրում:

Կապիտալը վերաբերում է այն ակտիվներին, որոնք Ձեզ են պատկանում: Այդպիսիք են անշարժ գույքը, ինսայդությունները և ներդրումները: Վարկատուներն ուզում են հավաստիանալ, որ Դուք համապատասխան միջոցներ ունեք վարկը մարելու համար:

Կարողությունը գնահատում է Ձեր ընթացիկ ֆինանսական վիճակը և թե որքան պարտք էք ի վիճակի կառավարել՝ ելնելով Ձեր եկամտից: Ունե՞ք աշխատանք: Որքան է Ձեր աշխատավարձը: Ի՞նչ այլ պարտքեր ունեք: Ունե՞ք երեխաներ կամ այլ անձինք, ովքեր Ձեր հոգածության ներքո են:

Քննարկեք հետևյալ կետերից յուրաքանչյուրը և որոշե՞ք՝ դրանք կարո՞ղ են դեր խաղալ վարկունակությունը որոշելու հարցում, և եթե այո, ապա ի՞նչ կատեգորիայի տակ է այն մտնում: Որոշ դեպքերում հնարավոր է երկու պատասխան:

Օրինակ.	Բնավորություն	Կապիտալ	Կարողություն	Ոչ մեկը
Արմանը սնանկության հայց է ներկայացրել 4 տարի առաջ:	X			
Դենիելն իր բոլոր վճարումները կատարում է ժամանակին:				
Մարթան վարկ է վերցրել՝ նոր ավտոմեքենա ձեռք բերելու համար:				
Դավիթն ունի չորս փոքր երեխա:				
Նորան կարող է խոսել ինչպես անգլերեն, այնպես էլ իսպաներեն:				
Էրիկն ունի բնակարան և մի փոքր ամառանոցային տնակ:				
Լուիզիայի տարեկան աշխատավարձը կազմում է 5 000 000 դրամ:				
Ջակոբը վերջին տասնամյակում օգտագործել է վեց վարկային քարտ:				
Աննան անցած տարվա ընթացքում փոխել է երեք աշխատանք:				
Բաբկենը որպես ժառանգություն ստացել է իր պապի հազվագյուտ և արժեքավոր ռոք հավաքածուն:				
Յանայի «Այ Զյու»-ն կազմում է 169:				

Մոդուլ 4 // Գրավոր վարժություններ

Վիկտորինայի պատասխաններ.

1. ճիշտ
2. Սխալ
3. ճիշտ
4. ճիշտ
5. Սխալ
6. Սխալ
7. 400-ից մինչև 850
8. ճիշտ
9. ճիշտ
10. Ամսական վճարման գումարը, տոկոսադրույքը, վարկի գործողության ժամկետը

Վարժության պատասխաններ.

Օրինակ.	Բնավորություն	Կապիտալ	Կարողություն	Ոչ մեկը
Արմանը սնանկության հայց է ներկայացրել 4 տարի առաջ:	X			
Դենիելն իր բոլոր վճարումները կատարում է ժամանակին:	X			
Մարթան վարկ է վերցրել՝ Նոր ավտոմեքենա ձեռք բերելու համար:			X	
Դավիթն ունի չորս փոքր երեխա:			X	
Նորան կարող է խոսել ինչպես անգլերեն, այնպես էլ իսպաներեն:				X
Էրիկն ունի բնակարան և մի փոքր ամառանոցային տնակ:		X		
Լուիզիայի տարեկան աշխատավարձը կազմում է 5 000 000 դրամ:		X	X	
Հակոբը վերջին տասնամյակում օգտագործել է վեց վարկային քարտ:	X			
Աննան անցած տարվա ընթացքում փոխել է երեք աշխատանք:	X		X	
Բաբկենը որպես ժառանգություն ստացել է իր պապի հազվագյուտ և արժեքավոր ռոք հավաքածուն:		X		
Յանայի «Այ Զյու»-ն կազմում է 169:				X